Azg
armenian daily

30 ՅՈՒԼԻՍ 1999 ՈՒՐԲԱԹ #140 (1886)

Ամերիկացի գիտնականներին հաջողվել է մարդու առողջ բջիջը վերածել քաղցկեղայինի

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 29 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ուռուցքային հիվանդությունների դեմ մղվող պայքարի բնագավառում կարեւոր արդյունքի են հասել ամերիկացի գիտնականները: Նրանք առաջին անգամ կարողացել են գենետիկ եղանակով մարդկային օրգանիզմի առողջ բջիջը վերածել քաղցկեղայինի: Մասնագետների գնահատումներով, այդ արդյունքը իսկական ծեղք է գիտության մեջ եւ ի վիճակի է էապես արագացնել ուռուցքային հիվանդությունների դեմ պայքարի նոր միջոցների մշակումը: Գիտնականներն այժմ կարող են լաբորատոր պայմաններում կոնկրետ գենետիկ «սխալներ» ներմուծել բջջի մեջ, եւ այնուհետեւ որոնել այդ բերությունները վերացնելու ընդունակ դեղորայք: Միաժամանակ, նրանք կարող են հետազոտությունների միջոցով պարզել, թե քաղցկեղի ո՛ր ծեւերը ինչ «խափանումներ» են առաջացնում գենետիկայում:

Ինչպես հաղորդում է Ասոշիեյթեդ Պրես գործակալությունը, այդ հետաքրքրային հետազոտությունները ղեկավարում էր Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտին առընթեր Ուայթհեդի կենսաբժշկական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Ռոբերտ Վայնբերգը: Իսկ համապատասխան հոդվածը հրապարակվել է «Նեյչուր» հեղինակավոր գիտական հանդեսում:

ՍԵՂՄԵԼ ԳՈՏԻՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՑ

Տունիսին գրանցվեց արդյունաբերության 2,8 տոկոս աճ

Իսկ օգոստոսին՝ բենզինի եւ ծխախոտի գների բարձրացում

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Այս կիսամյակը բնորոշվեց ռուսաստանյան ճգնաժամի բացասական հետեւանքներով: Դեկտեմբեր-հունվար ամիսներից պակասեցին դրամական հոսքերը, եւ ըստ մոտավոր գնահատականի, իրականությանը մոտ, Հայաստանը զրկվեց ամսական 10-13 մլն դոլար տրանսֆերտներից: Գրանցվեց վճարունակ պահանջարկի անկում եւ տնտեսական ակտիվության նվազում: Նվազեց եւ ներմուծումը, եւ արտահանումը, ինչն էլ ազդեց բյուջեի եկամուտների վրա», երեկ կառավարության կիզիչ նիստից հետո հայտարարեց Ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը՝ պետական եկամուտների նախարար Սմբատ Այվազյանի մասնակցությամբ լրագրողների համար ամփոփելով 99 թ. առաջին կիսամյակի բյուջետային արդյունքները: Կառավարության նիստն ավարտվել էր, սակայն շարունակվում էր խորհրդակցությունը, իսկ պետության երկու կարեւորագույն ոլորտները՝ ֆինանսներն ու պետական եկամուտները տնօրինող նախարարները մեկնաբանեցին տնտեսության ներկա իրավիճակը՝ ի դեմս բյուջեի կայունողականի եւ առկա ծեղքածքները փակելու ուղղությամբ միջոցառումների ծրագրի: Հաջորդ շաբաթ կմշակվի Աժ-ում քննարկվելիք բյուջեի ծախսային մասերի կրճատման եւ հարկային օրենսդրության փոփոխությունների նախագիծը: Միջոցառումների ծրագիրը հստակ է՝ հարկային դրույքաչափերի բարձրացում, որ ամրագրված էր նոր կառավարության սոցիալ-տնտեսական անդրանիկ ծրագրում, նորընտիր Աժ-ն ի գիտություն է ընդունել այս մարտավարությունը:

Տես էջ 2

ԱԶԵՐԻ ՄԱՄՈՒԼ

Բաքուն կարծում է, որ մինչեւ նոյեմբերի 9-ը ԱՄՆ-ը լուծելու է Ղարաբաղի խնդիրը

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Զաման» թերթի հաղորդման համաձայն, ԱՄՆ Սպիտակ տունը մտադիր է իր ամբողջական վերահսկողության տակ առնել Ղարաբաղի խնդրի կարգավորումը եւ սկզբունքորեն հանգուցալուծել այն մինչեւ այս տարվա նոյեմբերի 9-ը՝ Ստամբուլում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովը:

Ըստ թերթի, անցյալ շաբաթվա վերջին Ադրբեջանի նախագահը ստացել է պետքարտուղար Օլբրայթից եւս մեկ նամակ, որից բխում է, որ Վաշինգտոնն այս հարցում վճռական է տրամադրված:

Ադրբեջանի նախագահի խորհրդական Վաֆա Գուլուզադեն «Զաման» թերթի թղթակցին խոստովանել է, որ Ղարաբաղի հարցում Ադրբեջանը կանգնած է ծանր ընտրության առջեւ: Ըստ նրա, ԱՄՆ-ը վաղ թե ուշ լուծելու է Ղարաբաղի խնդիրը: Այսօր ԱՄՆ-ի ազգային շահերի գոտում միայն Ադրբեջանն է, մինչդեռ այս կացությունը, ասել է նա, չի բավարարում Սպիտակ տանը, եւ այժմ քայլեր են ձեռնարկվում Հայաստանը Ռուսաստանի ազդեցության գոտուց հանելու ուղղությամբ: Այդ նպատակով Վաշինգտոնը որոշակի հանդուրժողականություն է ցուցաբերում Հայաստանի նկատմամբ եւ որոշակի զիջումներ ակնկալում նաեւ Ադրբեջանից: ԱՄՆ-ը ցանկանում է ամեն գնով Հայաստանը պոկել Ռուսաստանի ճանկերից, ասել է նա:

ՀԱՄԱՌՈՏ

ԱՄՆ Սենատը հավանություն տվեց Միլոշեւիչի վարչակազմի դեմ ուղղված օրենքի նախագծին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ Սենատը միաձայն հավանություն է տվել Միլոշեւիչի վարչակազմի փաստացի շրջափակման մասին օրենքի նախագծին, որն ուղղված է Հարավսլավիայի ղեկավարությանը իշխանությունից հեռացնելուն եւ երկրի ժողովրդավարական ընդդիմությանը ֆինանսապես սատարելուն: Համաձայն այդ փաստաթղթի, 100 մլն. դոլար է հատկացվելու Սերբիայում եւ Չեռնոգորիայում ժողովրդավարությունը խորացնելու նպատակով: Պահանջվում է նաեւ արգելք դնել ամերիկյան բանկերում բացված սերբ առաջատար քաղաքագետների հաշիվների վրա եւ մերժել նրանց ԱՄՆ մուտքի վիզաներ տալը: Բացի այդ, նախագծով նախատեսվում է արգելել ԱՄՆ-ից Հարավսլավիա ռազմավարական նշանակության ապրանքներ, մասնավորապես համակարգիչներ կամ ծրագրային ապահովում արտահանելը: Նմանապես բացառվում է ամեն տեսակի փոխառությունների կամ ներդրումների հնարավորությունը: Միաժամանակ, նախատեսվում է ընդարձակել «Ամերիկայի ձայն» եւ այլ ռադիոկայանների հեռարձակումը Հարավսլավիայում: Հատկանշական է, որ այս օրենքը, եթե, իհարկե, հավանության արժանանա ԱՄՆ Կոնգրեսում, չի գործելու Կոսովոյի երկրամասում եւ Չեռնոգորիայում:

ԱՄՆ-ը մտադիր է կրճատել միջազգային ֆինանսավորման ծավալները

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ Կոնգրեսը հանդես է եկել հօգուտ երկրի բյուջեից միջազգային ֆինանսական կազմակերպությունների, մասնավորապես ԱՄՀ-ի եւ ՀԲ-ի ֆինանսավորման ծավալները կրճատելուն: Ինչպես տեղեկացնում է «Ֆայնենշլ թայմսը», ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը, հավանական է, արդեն այս շաբաթ խվեարկի հօգուտ մի օրենքի, որով նախատեսվում է կրկնակի կրճատել Ռուսաստանին հատկացվող ֆինանսական օգնությունն այնքան ժամանակով, քանի դեռ նա չի դադարեցրել միջուկային սպառազինությունների ոլորտում Իրանի հետ իր համագործակցությունը: Նախատեսվում է կրճատել նաեւ ԱՊՀ այլ երկրների վարկավորման ծավալները եւ ԱՄՆ մասնակցությունը միջազգային ֆինանսական ինստիտուտների մի շարք ծրագրերին:

Իսրայել-Վրաստան փոխըմբռնում ռազմական ոլորտում

ԹԲԻԼԻՍԻ, 29 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռազմական ոլորտում փոխըմբռնման հուշագիր են չորեքշաբթի Թել-Ավիվում ստորագրել Վրաստանի պաշտպանության նախարար Դավիթ Թեւզաձեն եւ Իսրայելի վարչապետ Եհուդ Բարակը, «Փրայմ Թայմսին» հայտնել են Իսրայելում Վրաստանի դեսպանատանը: Մինչեւ հիմա ռազմական համագործակցության ոլորտում երկու պետությունների միջեւ փաստաթուղթ չէր ստորագրվել:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի գլխավոր համաձայնագրերի ստորագրումը հավանաբար կհետաձգվի մինչեւ տարեվերջ

ԲԱՔՈՒ, 29 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան արտահանման հիմնական նավթամուղի վերաբերյալ համաձայնագրերի ստորագրումը հավանաբար կհետաձգվի մինչեւ տարեվերջ:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի շինարարության նախագծի վերաբերյալ համաձայնագրերի նախապատրաստման համար Անկարայում Ադրբեջանի եւ Թուրքիայի աշխատանքային խմբերի բանակցությունները, ինչպես որ նախատեսվում էր, շարունակվում են, չորեքշաբթի օրը Փրայմ Նյուսի թղթակցին հաղորդել են Ադրբեջանի պետական նավթաընկերությունում: Միաժամանակ Վաշինգտոնում ֆինանսական կառույցների հետ քննարկվում են ռազմավարական խողովակաշարի ֆինանսավորման հարցերը:

Բանակցությունների գործընթացի հիմնական նորությունը գլխավոր համաձայնագրերի ստորագումը հավանաբար տարեվերջ տեղափոխելն է: Դա պայմանավորված է ոչ թե Ադրբեջանի եւ Թուրքիայի աշխատանքային խմբերի տարաձայնություններով, Փրայմ Նյուսի թղթակցին հաստատեցին ադրբեջանական խումբը գլխավորող փոխվարչապետ Աբիդ Շարիֆովի գրասենյակում, այլ բանակցությունների գործընթացի յուրահատկությամբ:

Միջկառավարական համաձայնագրերի ստորագրումը մինչեւ տարեվերջ հետաձգելու պատճառներից մեկն էլ այն է, որ կողմերը ձգտում են զուգահեռ լուծել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի եւ անդրկասպյան գազամուղի հարցը:

Շահ Դենիզ գազի խոշոր հանքավայրի հայտնաբերումից հետո իրադրությունը փոխվեց. ակներեւ դարձավ Ադրբեջանի ծանրակշիռ դերը եւ տարածաշրջանի գազի շուկայում գործընկեր երկրների միջեւ ծագած սուր մրցակցությունը:

ՅԱՎԱԽՔ

Իշխանությունները թույլ չեն տվել հայ եւ վրաց գիտնականների «կլոր սեղանի» անցկացումը

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես հայտնի դարձավ «Նոյյան տաղան» գործակալությանը, հուլիսի 31-ից օգոստոսի 2-ը Ջավախքում անցկացվելիք «կլոր սեղանը», որին մասնակցելու էին հայ եւ վրաց գիտնականներ, չի կայանա՝ վրացական իշխանությունների որոշմամբ:

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, Կոնֆլիկտների լուծման հայկական կենտրոնի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Նիկոլայ Հովհաննիսյանը նշեց, որ հուլիսի 28-ին Վրաստանի ժողովրդավարական զարգացման եւ կոնֆլիկտների լուծման կենտրոնի ղեկավար Գեորգի Գոգսադզեն իրեն հեռախոսով հայտնել է, որ Սամցխե-Ջավախեթի մարզի ղեկավարությունը դեմ է միջոցառման անցկացմանը: Նման դիրքորոշումը բացատրվել է նրանով, որ շրջանում արդեն իսկ տիրող լարվածությունը կարող է էլ ավելի վատթարանալ Հայաստանի պատվիրակության այցի եւ «կլոր սեղանի» անցկացման արդյունքում:

Պրն. Հովհաննիսյանը նշեց, որ «Կենտրոնի եւ շրջանների միջեւ հարաբերությունները» թեմայով «կլոր սեղանի» ընթացքում նախատեսվում էր քննարկել Ջավախքի սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական եւ վարչակառավարման հետ կապված խնդիրները: Այդ հարցերի շրջանակը երկու կենտրոնների պատվիրակությունները քննարկել էին սույն թվի ապրիլին Երեւանում կայացած «կլոր սեղանի» ընթացքում: Ջավախքի Նինոծմինդա եւ Ախալքալաքի շրջաններում նախատեսվում էր անցկացնել քննարկման երկրորդ փուլը: Հայաստանում Վրաստանի դեսպանի խորհրդական Զուրաբ Ալեքսաշենն Նիկոլայ Հովհաննիսյանի հետ զրույցում նշել է, որ Ջավախքում լարվածությունը պայմանավորված է երկրում մոտ ժամանակներս անցկացվելիք նախագահական ընտրություններով:

Ստեղծված պայմաններում 6 գիտնականներից բաղկացած հայկական պատվիրակությունը չի կարող մեկնել Ջավախք: Վրաստանի իշխանություններն «կլոր սեղանը» առաջարկել են անցկացնել աշնանը Թբիլիսիում:

digitised by A.R.A.R.@

ՈՒՇԱԳԻՐ

Հուլիսի 15-ին փողոցային առեւտուրն արգելելու միջոցառում էր իրականացվում մայրաքաղաքում՝ առանց պատճառները նշելու: Հուլիսի 19-ին սիբիրյան խոցով վարակված ութ մարդ է հայտնաբերվել ու տեղափոխվել հիվանդանոց: Վարակի աղբյուրը, որն առանց այն էլ մայրաքաղաքում չէր, վաճառքի այդօրինակ պայմաններում:

Ի դեպ, որոշման հետեւանքով վերջին օրերին սուգայցեր ենք կատարել մայրաքաղաքի մի քանի շուկաներում: ԳՈՒՄ-ի շուկայի տնօրենությունը, որտեղ էլ իրենից հեռացրեց շրջակայքի աղտոտվածության պատասխանատվությունը, այնուամենայնիվ, սողոմ-գոմորը «կարգավորելու» փորձեր արեց՝ շուկայի մուտքն ազատեց միրգ ու բանջարեղեն վաճառողներից ու թույլ տվեց միայն հացը փռել անցորդների ոտքերի տակ: Իսկ աղացած մսի, հավի ու պանրի «բիզնեսով» զբաղվողներն իրենց ապրանքատեսակները երբեք չեն վստահում սառնարաններին, եթե նույնիսկ ունեն: Պաշտոնական տվյալներով 4652 տուբերկուլյոզով հիվանդ է հայտնաբերված, չհայտնաբերվածների թիվը գուցե ավելին է. առողջապահության նախարարությունն ահազանգում է այդ մասին, գտնում, որ այդ, ինչպես նաեւ աղիքային հիվանդությունների հաճախակի բռնկման ակունքներից մեկը սննդի փողոցային առեւտուրն է, սակայն երբեւէ կանխելու վճռականություն չի ցուցաբերում:

Քանի որ շուկաների սեփականատերերը հրաժարվում են մուտքից դուրս կամ շրջակայքում տիրող իրավիճակի պատասխանատվությունը ստանձնելուց, վաճառողներից փորձեցին պարզել՝ վճարո՞ւմ են զբաղեցրած տարածքի համար եւ ո՞ւմ են վճարում: Շուկայի վարչական ափխասակիցները վաճառողից գանձում են 1000 դրամ, մարդատար մեքենաներից՝ 2000, «Երազներից» 3000, բեռնատարներից՝ 3-4000 ու ավելի: Եվ ոչ միայն նրանցից: Միրգն ու բանջարեղենը վերավաճառողին հանձնող գյուղացուն նույնպես պարտավորեցնում են շուկայի մերձակայքում երեւալու, զբաղեցրած տարածքի համար վճարել: Այս արտավոր երեւույթը հոգեհարազատ է բոլոր շուկաներին, սակայն ոչ մի հարկահավաք դրա ստույգ հաշվարկը չի կատարում: Մինչդեռ օր ու գիշեր հաշվում են, թե հոսանքն այսքան բարձրացնելու կամ ջրի վարձն այսչափ հավելու դեպքում որքանով կփակվի բյուջեի ճեղքվածքը: Մենք էլ թերեւս չէինք հաշվարկի, եթե նրանք գոնե առեւտրի ու հիգիենայի տարրական կանոնները պահպանեին եւ փչ թե շատ բարեկիրթ առեւտուր կազմակերպեին իրենց «օկուպացրած» տարածքում:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Փողոցային առեւտուրն արգելելու, շուկաների եւ նրանց տերերի մասին

վնասազերծվել է: Ուրեմն, հուլիսի 20-ից կարելի էր անարգել վերսկսել առեւտուրը, որովհետեւ մեր քաղաքացիներին այլեւս վարակվելու վտանգ չի սպառնում, հակառակ դեպքում երեկ կրկին փողոցային առեւտուրն արգելելու որոշում կկայացվեր: Հետաքրքրական է, որ «փողոցային առեւտուր» կոչվածն արգելելիս ավելի շատ ուշադրության են արժանանում թեթեւ արդյունաբերական ապրանքներ, քան հաց, խորտիկներ, թխվածքաբլիթներ, շուկային կից տարածքներում մսեղեն ու կաթնեղեն վաճառողները:

Մասնավորապես ԳՈՒՄ-ի շուկայի, գարշահոտությամբ ու աղբի առատությամբ մրցակից չունեցող, տարածքում աղբակույտը ճեղքած հացավաճառողուհին ինքնագոհ իր գործն էր կատարում: Շուկայի երկայնքով մշտապես աղացած միս, հավ ու պանիր են հրամցվում գնորդին, տվյալ դեպքում՝ սպառողին, որի շահերը պաշտպանելու համար հասարակական կազմակերպություններ են ստեղծվել: Առայժմ տեսանելի չէ, թե որ տիրույթում են նրանք իրականացնում սպառողների շահերի պաշտպանությունը: Համենայն դեպս, մինչեւ հիմա չեն հայտնել, թե 36-38 C ջերմության, ճանճերի քանի՞ տոկոս առատության եւ փոշու քանի՞ սմ առկայության պայմաններում է տվյալ սննդամթերքը դեռեւս իրացման պիտանի: Քանի որ փողոցային առեւտուրն արգելելու բոլոր որոշումները շրջանցում են նրանց, մնում է հետեւություն անել, որ ծխախոտն ու ծայնասկավառակները, բանջարեղենն ավելի վտանգավոր հարուցիչներ են պարունակում, քան միսն ու կաթնեղենը՝ վաճառքի այդօրինակ պայմաններում:

Ի դեպ, որոշման հետեւանքով վերջին օրերին սուգայցեր ենք կատարել մայրաքաղաքի մի քանի շուկաներում: ԳՈՒՄ-ի շուկայի տնօրենությունը, որտեղ էլ իրենից հեռացրեց շրջակայքի աղտոտվածության պատասխանատվությունը, այնուամենայնիվ, սողոմ-գոմորը «կարգավորելու» փորձեր արեց՝ շուկայի մուտքն ազատեց միրգ ու բանջարեղեն վաճառողներից ու թույլ տվեց միայն հացը փռել անցորդների ոտքերի տակ: Իսկ աղացած մսի, հավի ու պանրի «բիզնեսով» զբաղվողներն իրենց ապրանքատեսակները երբեք չեն վստահում սառնարաններին, եթե նույնիսկ ունեն: Պաշտոնական տվյալներով 4652 տուբերկուլյոզով հիվանդ է հայտնաբերված, չհայտնաբերվածների թիվը գուցե ավելին է. առողջապահության նախարարությունն ահազանգում է այդ մասին, գտնում, որ այդ, ինչպես նաեւ աղիքային հիվանդությունների հաճախակի բռնկման ակունքներից մեկը սննդի փողոցային առեւտուրն է, սակայն երբեւէ կանխելու վճռականություն չի ցուցաբերում:

Քանի որ շուկաների սեփականատերերը հրաժարվում են մուտքից դուրս կամ շրջակայքում տիրող իրավիճակի պատասխանատվությունը ստանձնելուց, վաճառողներից փորձեցին պարզել՝ վճարո՞ւմ են զբաղեցրած տարածքի համար եւ ո՞ւմ են վճարում: Շուկայի վարչական ափխասակիցները վաճառողից գանձում են 1000 դրամ, մարդատար մեքենաներից՝ 2000, «Երազներից» 3000, բեռնատարներից՝ 3-4000 ու ավելի: Եվ ոչ միայն նրանցից: Միրգն ու բանջարեղենը վերավաճառողին հանձնող գյուղացուն նույնպես պարտավորեցնում են շուկայի մերձակայքում երեւալու, զբաղեցրած տարածքի համար վճարել: Այս արտավոր երեւույթը հոգեհարազատ է բոլոր շուկաներին, սակայն ոչ մի հարկահավաք դրա ստույգ հաշվարկը չի կատարում: Մինչդեռ օր ու գիշեր հաշվում են, թե հոսանքն այսքան բարձրացնելու կամ ջրի վարձն այսչափ հավելու դեպքում որքանով կփակվի բյուջեի ճեղքվածքը: Մենք էլ թերեւս չէինք հաշվարկի, եթե նրանք գոնե առեւտրի ու հիգիենայի տարրական կանոնները պահպանեին եւ փչ թե շատ բարեկիրթ առեւտուր կազմակերպեին իրենց «օկուպացրած» տարածքում:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ավանդական կուսակցությունները պատշաճում են Հայաստանի վարչապետին

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ՄՆԱՐՔ: «Հայաստանի վարչապետ Վազգեն Սարգսյանը, հավանաբար, նույնիսկ չէր էլ սպասում, որ հանրապետությունը գտնվում է նման աղետալի վիճակում», հայտարարեց Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության փոխտեղապետ Հարություն Առաքելյանը՝ անդրադառնալով հուլիսի 28-ին Հայաստանի հեռուստատեսությամբ հեռարձակված վարչապետի՝ երկրի տնտեսության վիճակի վերաբերյալ ելույթը մեկնաբանելու Սնարք բրքակցի խնդրանքին: Հիշեցնենք, որ Վազգեն Սարգսյանը հանրապետության տնտեսական վիճակը բնորոշեց որպես «ծանր, բայց ոչ անհուսալի»:

Առաքելյանի կարծիքով, Նախարարների կաբինետի նախագահը ճիշտ է գնահատել իրավիճակը եւ կայացրել միակ ճիշտ որոշումը՝ դիմել ժողովրդին: Նա ընդգծեց, որ եթե կառավարությունը տարբեր կուսակցություններից ու միավորումներից տնտեսության կայունացմանը նպատակաուղղված գործնական առաջարկություններ ընդունի, դրանից բոլորը կշահեն: Առաքելյանի կարծիքով, գլանակների ներմուծման ակցիզային հարկի ավելացումը կոչված է պատշաճելու հայրենական արտադրողներին: «Մենք կորցրել ենք վաճառահանման շուկան, եւ այժմ հարկավոր է առավելագույն ջանքեր ներդնել այն վերադարձնելու համար», ասաց նա:

ՀՅԴ-ի Հայաստանի Գերագույն մարմնի մամուլի եւ հասարակայնության հետ կապերի համար պատասխանատու Գեղամ Մանուկյանն իր հերթին հայտարարեց, որ ՀՅԴ-ն ողջունում է վարչապետի ելույթը՝ համարելով «անկեղծ եւ ժամանակին»: «Մենք համոզված ենք, որ ստեղծված իրադրության համար մեղքի բաժին ունեն Արժույթի միջազգային հիմնադրամն ու մյուս միջազգային կազմակերպությունները, որոնք Հայաստանին պարտքերի վիհն են մղել», ասաց Մանուկյանը: ՀՅԴ-ը ողջունում է գլանակների ներմուծման ակցիզային հարկի կիրառումը, քանի որ հայկական ապրանքները պետք է օգտվեն առավելությունից օտարերկրյա ապրանքների նկատմամբ: Ինչ վերաբերում է բենզինի գների ավելացմանը, ապա, նրա կարծիքով, դա պետք է փոխհատուցվի հանրապետությունում արտադրվող ապրանքների գների իջեցմամբ:

Նշենք, որ այսօր առավոտյան, այսինքն, վարչապետի ելույթից անմիջապես հետո, Հայաստանում կտրուկ բարձրացան գլանակների գները, ըստ որում՝ ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական: Իսկ բենզինի ակցիզային հարկն ավելացնելուց հետո սպասվում է նաեւ ժողովրդական սպառման մյուս բոլոր ապրանքների գների աճ:

Խոզուկի պատվաստանյութը կգնվի ֆրանսիական «Պաստյոր» ֆիրմայից

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանում պարոտիտի (խոզուկ) բռնկում է: Պատճառն այն է, որ մի քանի տարի է, ինչ հանրապետությունում չեն անցկացվել այդ հիվանդության դեմ պատվաստումներ: Վիճակը չփրկեց պատվաստանյութի այն 50 հազար չափաբաժինը, որ այս տարի ստացան հինգ տարեկան երեխաները: Առողջապահության նախարարությունը հայտարարել էր պատվաստանյութի գնման հայտմրցույթ: Հաղթել է տեղի «Ֆարմտրաստ» ՍՊԸ դեղագործական ֆիրման: Պատվաստանյութը ձեռք կբերվի ֆրանսիական «Պաստյոր» ֆիրմայից: Ինչպես ասացին նախարարությունում, ներկայումս ընթանում է գնվող ապրանքի որակի քննարկում: Ամեն ինչ արվում է, որպեսզի մինչեւ տարեվերջ ստացվի պատվաստանյութի անհրաժեշտ՝ 200 հազար չափաբաժինը:

Լավագույն համակարգչային մասնագետները կհավաքվեն Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒԼԻՍ, ՄՆԱՐՔ: Օգոստոսի 17-22-ը Երեւանում կընթանա CSIT 2-րդ միջազգային խորհրդաժողովը՝ նվիրված համակարգչային եւ տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերին: Համաժողովին կմասնակցեն գիտնականներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Ֆինլանդիայից, Հունաստանից, Իտալիայից, Բելգիայից, Հունգարիայից, Ռուսաստանից եւ Ուկրաինայից: Խորհրդաժողովի շրջանակներում կանցկացվի երկու «կլոր սեղան»՝ նվիրված Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման խնդիրներին եւ միջազգային գիտական հիմնադրամների կողմից ֆինանսավորման հարցերին:

Տնտեսին գրանցվեց արդյունաբերության 2,8 տոկոս աճ

Սկիզբը էջ 1

Ինչպե՞ս հաղթահարել թանկացման դառը դեղահաբը

Լեւոն Բարխուդարյանը եւ Սմբատ Այվազյանը ջանում էին հաղթահարել թանկացման դառը դեղահաբերը: Եվ այսպես, քանզի 99 թ. պետբյուջեն միայն եկամուտների գծով այս տարի կունենա 9,5 մլրդ դրամի ծեղքվածք, որին գումարվում են էներգետիկ, ոռոգման, խմելու եւ ջեռուցման համակարգերում առկա մեծ պարտքերը, պետությունը ծեռնարկում է հավելյալ եկամուտների հայթայթման քայլեր: Իսկ հավելյալ եկամուտները բաղված են, երկու նախարարների համոզմամբ, մեր երկրի ամենասվերային ոլորտներում՝ բենզին եւ ծխախոտ: Բարձրանում է ոչ թե բենզինի ակցիզային դրույքաչափը, այլ բենզինից գանձվող բնապահպանական վճարը, ինչը չի փոխում հարցի էությունը, օգոստոսի 1-ից բենզինի 1 տոննայի համար կվճարվի ոչ թե 120 դոլար, այլ՝ 205 դոլար: Այսինքն՝ կառավարությունն ընդունել է օրենքի ուժ ունեցող որոշում 44 տոկոս բնապահպանական վճար գումարել մաքսային արժեքին, բայց ոչ ավել, քան 85 տոկոսը: Այս ճանապարհով պետությունը հույս ունի իր գանձանակը լրացնել 2 մլն դոլար լրացուցիչ եկամուտով: Նախարարական հաշվարկով՝ 20 լ բենզինի գինը չի գերազանցի 4000 դրամը: Սմբատ Այվազյանը համոզված էր, որ միջազգային շուկայում առկա բենզինի գնի աճը, որին գումարվում է տեղական հարկերի բարձրացումը, վտանգավոր արդյունքների չի հանգեցնի, եւ ընդհանրապես, պետական եկամուտների նախարարությունը հուսով է, որ միջազգային շուկայում բենզինի գների իջեցման միտում կա (հաղթած հավը երազում կորեկ է տեսնում): Բենզինի ոլորտում առկա գերշահույթները, ըստ Սմբատ Այվազյանի, կնպաստեն սպառողական շուկայում այս կարեւորագույն վառելիքի գների համեստ բարձրացմանը՝ հաշվի առնելով հասարակության գնողունակության ցածր մակարդակը: Առավել հոգոցիչ էր երկրորդ պատճառաբանությունը. էներգետիկ ոլորտում առկա ճգնաժամը եւ բյուջետային ծեղքվածքը փակելու համար երկու հնարավորություն կար. ա) կամ բարձրացնել էլեկտրաէներգիայի եւ մնացյալ սակագները, բ) կամ բենզինի գինը. «Սվերային շահույթների մի մասը վերցնել եւ բաժանել ժողովրդին», վկայեց Սմբատ Այվազյանը:

Ծխախոտի ոլորտում վիճակն առավել հետաքրքրական է. այստեղ պետությունը բարձրացնում է ոչ միայն ներմուծվող, այլեւ տեղում արտադրվող ծխախոտի հաստատագրված վճարները: Գաղտնի չէ, որ ծխախոտագործությունը Հայաստանում արդյունաբերության այն եզակի ճյուղերից է, որ վերելք է ապրում, եւ պատահական չէ, որ հունիս ամսին, ըստ ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանի, տեւական ընդմիջումից հետո առաջին անգամ գանձվել է արդյունաբերական աճ՝ 102,8 տոկոս, եւ այդ աճն ի հաշիվ թեթեւ, տեքստիլ արդյունաբերության եւ մետալուրգիայի ճյուղերի, թեթեւ արդյունաբերության մեջ ծխախոտի՝ «Գրանդ տոբակոյի» եւ նրան միաձուլվող «Հայծխախոտի» ներդումն առավել քան ազդեցիկ է: Համեմատության համար փաստենք, որ մեքենաշինության, սարքաշինության եւ ծանր արդյունաբերության բոլոր ճյուղերում անկումը շարունակվում է: Սակայն հաջողության առաջին նշաններն արձանագրող ճյուղից պետությունը որոշում է հավաքել հնարավորինս ավելի շատ հաստատագրված վճար: Մեկ արկղ ֆիլտրով տեղական արտադրության ծխախոտի համար նախկինում գանձվում էր 36 դոլար հարկ, օգոստոսի 1-ից կգանձվի 120 դոլար: Տեղական առանց ֆիլտրի ծխախոտի մեկ արկղից մինչ այս գանձվում էր 14 դոլար, օգոստոսի 1-ից՝ 20 դոլար: Ներմուծվող մեկ արկղ ֆիլտրով ծխախոտից գանձվում է 43 դոլար, օգոստոսի 1-ից՝ 150, եւ առանց ֆիլտրի ներկրվող ծխախոտի համար հաստատագրված վճարը կհասնի 60 դոլարի: Հիշեցնենք, որ մեկ արկղում 500 տուփ ծխախոտ է: Եթե արկղադոլարային այս հաշվարկը վերածենք առավել հասկանալի՝ դրամական տեսքի, ապա արտասահմանյան սիգարետի մեկ տուփի հարկը կավելանա մոտ 160 դրամով, տեղական սիգարետինը՝ 130: Առանց ֆիլտրի տեղական սիգարետի մեկ տուփի թանկացումն առավել համեստ է՝ 4-5 դրամ: Այս քայլը Սմբատ Այվազյանը գնահատեց իբրեւ սոցիալական ուղղվածություն ունեցող միջոցառում, քանզի առանց ֆիլտրի ծխախոտ օգտագործում են սոցիալապես անապահով խավերը: «Գերշահույթ ունեցող ոլորտում թանկացում չի լինում, իմ կարծիքով, ընդամենը 20-23 տոկոս թանկացում կլինի իրացման ոլորտում», մեկ անգամ եւս հավաստիացրեց Սմբատ Այվազյանը: Նա շեշտեց նաեւ, որ տեղական արտադրողի շահերը հնարավորինս պաշտպանվել են, նախարարի հաշվարկով, ներմուծվող եւ արտահանվող 1 տուփ ծխախոտներից գանձվող հարկի տարբերությունը 43 դրամ է՝ հօգուտ ներքին արտադրողի: Հետեւենք, ինչպես կարձագանքեն ներքին արտադրողները, փաստն այն է, որ երեկվանից արդեն տեղական արտադրության միջին ծխախոտների գինն աճել է 60-70 դրամով, այնինչ հաստատագրված վճարը դեռեւս չի բարձրացել: Զուգահեռաբար՝ «Գրանդ տոբակոն» եւ «Հայծխախոտը» դադարեցրել են ծխախոտի բացթողումը մանրածախ վաճառքի, որովհետեւ հարկային այս մկրատի հետեւանքով նրանք վնասներ են կրում:

Սպիրտին եւ ալկոհոլային խմիչքներին դեռեւս չեն դիպչում

Բոլորին է հայտնի, որ սվերային կոչված ոլորտներից առավել ծոխ է ալկոհոլային խմիչքների արտադրության եւ իրացման գործունեությունը: Սմբատ Այվազյանն անձամբ խոստովանեց, որ իրենք չեն հասցնում ֆիքսել, թե որտեղ օրու արտադրության ինչ ծեռնակություն ստեղծվեց եւ արտոնագիր ստացավ՝ սնկի պես աճում են կոտայքի եւ Արարատի մարզերում լցված-պատրաստված ալկոհոլային խմիչքները: Ամիսը 5-6 նոր արտադրություն: Ցավոք, առայժմ նրանց հարկման հերը չի հասել. Սմբատ Այվազյանի պնդմամբ, մեզ մոտ այս ոլորտի հարկման ամենավաս մոդելն է որդեգրվել: Պետական եկամուտների նախարարությունը պատրաստվում է անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնել կառավարությանը, որպեսզի 2000 թ. սկզբից 1 լիտրին համարժեք չափով բարձրանան եւ հաստատագրվեն հարկերը: Առայժմ այս ոլորտի սվերային արտաքերի առջեւ կանաչ ճանապարհ է:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրատ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (37421) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարվածք «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձուում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱՓԱԿ

«Նաիրիտի» երկու կիսադեմը՝ մռայլ եւ ժպտադեմ

Ըստ վարչապետի եւ ըստ առեւտրի ու արդյունաբերության նախարարի

Խորհրդային շրջանում ասում էին «Նաիրիտ» եւ հասկանում զարգացած արդյունաբերական Հայաստան, կաուչուկի մենաշնորհային արտադրությամբ «Նաիրիտ» գործարանը Հայաստանին բերում էր ֆինանսական լուրջ հոսքեր, տնտեսական ու նաեւ քաղաքական հզորություն: Հայաստանի անկախ հանրապետության հռչակումից հետո սկսվեց «Նաիրիտի» անկումը: Այսօր գործարանը բյուջեին պարտք է 35-37 մլրդ դրամ իր բոլոր տույժերով ունի, դա իհարկե սարսափելի է: ՄԱՀ-ի առաջարկը, պահանջը միանգամայն ճիշտ է, պետք է համարձակ քաղաքական որոշում կայացվի կամ «Նաիրիտի» հետագա գործարկման կարգը եւ ծեւը պետք է որոշվի, կամ եթե «Նաիրիտը» գործարկման ծեւ, եղանակ չունի, պետք է ուղղակի լուծարել գործարանը, այլապես թողնել պետության եւ ժողովրդի վզին այդպիսի պարտքերով «Նաիրիտ» անբուլլաստելի է»:

Առեւտրի եւ արդյունաբերության նախարար Հայկ Գեւորգյանը հարաբերական լավատես էր. «Նաիրիտն» այսօր կարող է ամսական 6-7 հազար տոննա կաուչուկ արտադրել: Մայիս ամսից սկսել է արտադրել 600 տոննա ացետիլենային կաուչուկ, որի հումքը գազից է: Ացետիլենային կաուչուկի իրացումը մինչեւ այսօր կասարվում էր Հայաստանում, եւ առկա է հին պարտադանների խնդիրը, այն ծեռնարկությունների, որոնք պարտք են «Նաիրիտին», իսկ այժմ պետք է իրացվի Ռուսաստանում: Այո, ՄԱՀ-ն առաջարկում է «Նաիրիտը» վերակազմավորել առանձին արտադրամասերի: Եթե հնարավոր լինի «Նաիրիտը» վերակառուցել 10 արտադրամասերի, եւ բոլորն էլ լինեն շահավետ, արտադրանք տան, կազմակերպեն մեծ արտահանում, ապա դա շատ դրական կհամարեմ, բայց ես այսօր այդպիսի ռեալ հնարավորություններ չեմ տեսնում: «Նաիրիտի» տեխնոլոգիային նայելով համոզվում ես, որ արտադրամասերը մեկը մյուսից անբաժան են եւ փոխկապակցված:

«Նաիրիտն» այսօր կարող է արտադրել 10-25 անուն տարբեր հիմիական նյութեր՝ սկսած կաուստիկ սոդայից, բայց դրանք այսպես թե այնպես կապված են մեկը մյուսի, եւ ի վերջո՝ կաուչուկի արտադրության հետ:

«Նաիրիտի» պատճառով առաջացած պարտքերը ներելու կարիք չկա, բայց այն պարտքերը, որ առաջացել են ոչ նրանց մեղքով, պետք է ներվեն: Հանձնաժողովը շարունակելու է հաշվարկները, եւ առաջիկա օրերին կառավարությանը կներկայացնենք՝ անարդյունավետ կառավարում: «Նաիրիտի» տնօրեն Գագիկ Ներսիսյանը հակափաստարկներ էր բերում, սակայն կարեւորը վերջնարդյունքն է: «Նաիրիտը» ոչ միայն ֆինանսապես չի առողջանում, այլեւ խրվում է պարտքերի վիհը, այնինչ նրա հետ համագործակցելու մտադրություն ունեցող ընկերություններ կան, նույն «Սումիտոմոն» որպես միջնորդ իրացման համար, ապա իրանական, ռուսական տարբեր ընկերություններ: Ռուսաստանում պատրաստ են անգամ մեզ տրամադրել բուսադիեն որպես բուսադիենային կաուչուկի հումք: Այսպես՝ Մոսկվայի քաղաքապետ Յու. Լուժկովը վարչապետին պաշտոնական վերջին հանդիպման ժամանակ հայտնել է, որ իրենք պատրաստ են 20 հազար տոննա կաուչուկի արտադրությանն անհրաժեշտ բուսադիեն տրամադրել՝ վերջում գնելով պատրաստի արտադրանքը: Դեռեւս Արմեն Դարբինյանի վարչապետական այցի ընթացքում պայմանավորվածություն էր ձեռք բերվել «Նաիրիտից» ստանալ նախահաշվարկներ տարեկան 20 հազար տոննա կաուչուկի արտադրությանն անհրաժեշտ ֆինանսական եւ հումքային ծախսերի համար, սակայն առ այսօր ոչ մի փաստաթուղթ չի ուղարկվել... Հաջող կառավարման դեպքում մենք կկարողանանք մեր ավանդական շուկաներում ասիճանաբար հավասարակշռել «Դյուպոնին», որը կաուչուկի արտադրության մենաշնորհն է վայելում:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Պարզապես իրենց կարծիքն են հայտնել

Այս օրերին առավել սրվել են եկեղեցուն, մասնավորաբար Հայ առաքելական եկեղեցուն ուղղված զգացողությունները: Բնական է: Մի քանի ամիս հետո մեր եկեղեցուն հովվապետ ենք ընտրելու, ընտրելու ենք ողջ ազգով: Խոսում են, գրում, հեռուստատեսությամբ ու ռադիոյով ելույթներ են ունենում ոչ միայն հոգեւորական դասի ներկայացուցիչները, այլեւ աշխարհականներ, ամեն մեկն իր համար նախընտրելի անձին է գովաբանում, 48 հավակնորդներից իր համար նախընտրելիին է փառաբանում: Մեղադրելի ոչինչ չկա: Այլ բան է, թե ինչպես է գովաբանում եւ ինչպանով է նպաստում իր թեկնածուի վարկի բարձրացմանը: Անհարկի, անհմուտ, անգրագետ գովաբանությունն, անշուշտ, մեծ չափով վնասում է նույնիսկ արժանավոր թեկնածուի սպասվելիք հաջողությանը:

Անտեղի լարվածության առաջին սերմն արդեն քաղեցինք Հայաստանի Պահպանողական կուսակցության ղեկավար Միխայել Հայրապետյանի հայտարարության եւ մամլո ասուլիսում (հուլիսի 27-ին) ունեցած ելույթի համար: Արտակարգ, արտառոց, Հայ առաքելական եկեղեցուն (կամ որեւէ մեկին) վիրավորող ի՞նչ է ասվել: Ոչի՛նչ: Պարզապես Պահպանողական կուսակցության հայտարարությունն ու մամլո ասուլիսում ասված մտքերն անհարկի քաղաքականացվել են: Մի կուսակցություն եւ այդ կուսակցության ղեկավարն իրենց կարծիքն են հայտնել: Առավել ես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ կուսակցության ու Միխայել Հայրապետյանի պատշաճությանն արժանացած թեկնածուն այստեղ՝ Հայաստանում չէ, եւ կարող է բնավ իմացած չլինել այս գործողությունների մասին: Դուք էլ ձեզ համար նախընտրելի թեկնածու կունենաք: Նրա արժանիքների մասին խոսեք: Փառք Աստծո, Հայաստանում հիմա միակ բանը, որն անչափ առատ է՝ թերթն է: Մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի պակասությունից կամ նրանց փակ լինելուց չենք բողոքում: Գրեք, ասեք, խոսեք, ելույթ ունեցեք, փառաբանեք՝ որքան կարող եք:

Շնորհանք, որ երբեմ կարեւոր իրադարձության շեմին ենք. այս տարվա հոկտեմբերի վերջին Հայ առաքելական եկեղեցու հովվապետ է ընտրվելու, 2000 թվականին ամբողջ քրիստոնյա աշխարհը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան 2000-ամյակն է նշելու, եւս մեկ տարի անց տոնվելու է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Ահա, այս կարեւոր իրադարձությունները նշելու նախապատրաստական աշխատանքների ու ծրագրերի մասին խոսենք, այստեղ իրար հերթ չտանք խոսելու, առաջարկելու:

ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԱՆ

Խաղարկված օբյեկտիվություն. հոգուս ո՞ւմ եւ ի վնաս ո՞ւմ...

Երեկ «Ազգն» ահազանգ ստացավ Սարյան փողոցի թիվ 4 շենքի բնակիչներից՝ նույն շենքի բնակիչ Ասոն Ղազարյանի եւ նրա հարազատների դեմ կատարվող անընդհատ վարկաբեկումների ու զրպարտությունների կապակցությամբ եւ դրանց վերջ տալու նպատակով: Պարզվեց՝ այս պատմությունն ավելին է, քան սովորական ընտանեկան ողբերգություն. թեկուզեւ այն պատճառով, որ ՌԴ եւ Ուկրաինայի դեսպանություններն էլ են խառնվել իրադարձություններին: Իսկ թե ի՞նչ է պատահել՝ կպատմենք սկզբից: Ընթերցողին տեղեկացնենք միայն, որ երեկվա «տնային պայմաններում» աուլիսն ընդամենը շարունակությունն է փաստաբան Ռուբեն Ռշտունու եւ «Ֆեմիդա» կազմակերպության՝ հուլիսի 15-ին հրավիրած ասուլիսի («Ազգն» անդրադարձել էր նյութին), այն տարբերությամբ, որ այս անգամ պատասխան հայտարարություններով հանդես եկան նաեւ Ղազարյանները:

Պատմության սկիզբը շատերին կարող է ծեծված թվալ, քանզի հայ երիտասարդներից շատերն են մեկնել եւ մեկնում Ռուսաստան՝ փող վաստակելու: Նույն կերպ վարվեց եւ Ասոն Ղազարյանը՝ այնուհետեւ ամուսնանալով Ալեւտինայի հետ, որն առաջին ամուսնությունից ուներ մի դուստր՝ Օլեսյային. վերջինիս Ղազարյանների ընտանիքը խնամում եւ մեծացնում է հարազատ զավակի պես: Ղազարյանների հարեւանուհին՝ Հասմիկ Գասպարյանը վերհիշում է, թե ինչպես էր Ալեւտինան իրեն պատմել առաջին ամուսնության մեղծավանջները. հարբեցող ամուսին, որը ծեծել է իրեն եւ փորձել բռնաբարել մանկահասակ դստերը... Ընթերցողին կխնդրենք հատուկ ուշադրության առնել այս փաստը, քանի որ հետագայում կինը Ասոն Ղազարյանին է մեղադրելու իրեն եւ երկու դուստրերին (երկրորդ դուստրը՝ ներկա ամուսնությունից) բռնաբարելու հանցանքում:

Այսպիսով, երկրորդ ամուսնությունը կնոջ համար բերեւս պիտի դառնար փրկություն, հատկապես եթե հաշվի առնենք, որ Ասոն Ղազարյանի ծնողները, հարեւանների միահամուռ վկայությամբ, ջերմությամբ են ընդունում նաեւ վերաբերվում նրան եւ դստերը: Սակայն, նույն հարեւանների պատմածի համաձայն, ներընտանեկան լարվածությունը շարունակվում է տարիներ ի վեր՝ ուղեկցվելով հարսի բռնարարքներով հիվանդ սկեսրոջ հանդեպ: Թերեւս ասուլիսում Ալեւտինան հայտարարել էր, թե ընտանիքի քայքայման պատճառը Ասոնի քույրը՝ «Հայկանդուխտ» հասարակական-քաղաքական կազմակերպության նախագահ Արմենուհի Ղազարյանն է, սակայն շենքի բնակիչները փաստում են, որ քույրը գործին միջամտել է շատ ուշ, իրենց իսկ խնդրանքով, որպեսզի կանխվի այդ տանը տիրող անբարոյականությունը՝ «իրենց երեխաներին վատ օրինակ ծառայող», ինչպես ասացին նրանք, եւ Ասոն Ղազարյանի դեմ տարբեր կարգի ոտնձգությունները:

Ասոն Ղազարյանը նախկին ազատամարտիկ է եւ լրագրողներիս հետ հանդիպմանը ներկայացել էին նաեւ նրա մարտական ընկերները: Հերքելով եւ հրեշավոր համարելով հերյուրանքները՝ իբր Ղազարյանը բռնություն է գործադրել կնոջ ու դուստրերի հանդեպ, նրանք բազմաթիվ վկայություններ բերեցին՝ ընկերոջ օրինավորությունը հաստատող: «Մենք մարտի դաշտում ենք միասին եղել, սակայն այսօր օրենքի առջեւ նա ավելի անպաշտպան է, քան՝ բռնամու հետ կռվելիս. երբեմ ազատամարտիկներիցս ոչ մեկը չէր դիմի նման քայլի՝ մեր ազգային բարոյականությանը հակասող», պնդում են նրանք: Ի հավելումն ասենք, որ Ասոն Ղազարյանի խորթ դստեր դեմ քրեական գործ էր հարուցված՝ հորեղբորը ֆիզիկական վնասվածք պատճառելու կապակցությամբ, սակայն վերջինս, աղջկա ծակատագրին բիծ չթողնելու նպատակով, ավելի ուշ հրաժարվել էր մեղադրանք ներկայացնելուց:

Բնակիչները, քույր եւ եղբայր Ղազարյանների հետ համաձեղ, արդեն հղել են իրենց ուղերձները վարչապետին, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, ՆԳ նախարար Սուրեն Աբրահամյանին, Տիգրան Նաղդալյանին եւ լրատվամիջոցներին՝ արդարություն պահանջելով:

Իսկ պահանջը հետեւյալն է. առանձին բնակարածություն հատկացնել կամ իր հայրական տանը տնօրինելու իրավունքը վերադարձնել Ասոն Ղազարյանին, որի կինը, առանց ամուսնու որեւէ համաձայնության, տիրացել է բնակարանի օդերին եւ իրեն վարձակալ դարձրել, իսկ ներկայումս ամեն գնով փորձում է տնից վտարել ամուսնուն՝ վերջինիս մեղադրելով հարբեցողության, ֆիզիկական բռնություններ գործադրելու եւ այլասերվածության մեջ: Ալեւտինա Ղազարյանի ամուսնալուծության եւ ունեցվածքի բաժանման հայցը քննվել է Սպանդարյան ժողդատարանում, իսկ ներկայումս գործը Շենգավիթի դատարանում է, սակայն վերջնական վճիռ դեռեւս չի կայացվել:

Առնվազն տարօրինակ է, որ այս դատավեճում Ալեւտինայի կողքին որպես փաստաբան կանգնած է Ռուբեն Ռշտունին՝ ասուլիսում նրա հետ ներկայացնելով մի պատմություն, ուր կինը, շահարկելով իր օտարազգի լինելը, անընդհատ կեղծիքների է դիմում՝ գործից բարձրացած աղմուկը հասցնելով ընդհուպ ՌԴ եւ Ուկրաինայի դեսպանություններ, որոնք, ի դեպ, ըստ մեր քրդ. օր.-ի, միջամտելու իրավունք չունեն: Պարզապես պետք է ճիշտ տարբերակել դեպքերը. արդյոք սա այն դե՞պքն է, երբ ասպարեզում կնոջ ոտնահարված իրավունքներն են, որոնք պաշտպանության կարիք ունեն: Թերեւս պաշտպանության կարիք ունի Ասոն Ղազարյանը... Նույն կերպ կցանկանայինք հարցը ուղղել եւ «Ֆեմիդա» կազմակերպությանը», թերեւս անհրաժեշտ էր ասուլիսի մասին տեղյակ պահել եւ հակառա՞կ կողմին՝ խոսքի հնարավորություն ընձեռելով երկուսին էլ: Հուսանք, այդ հանդիպումը կկայանա: Ի վերջո հիշեցնենք, որ պետությունը պիտի պաշտպանի նախեւառաջ ի՛ր քաղաքացու շահերը, որոնք տվյալ դեպքում իրական պաշտպանության կարիք ունեն:

Հ. Գ.-Վարչապետին հղված ուղերձում բնակիչները նշել են նաեւ, որ Ա. Ղազարյանի կինը, հանուն նյութական առպահովության, թույլ է տվել 18-ամյա ավագ դստեր ամուսնությունը 45-ամյա ամուսնացած մեծահարուստի հետ՝ թերեւս օրինական համարելով երկկնությունը...

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Ազգային

ԶՐՈՒՅՑ

«Հայրենիք լքելը հեռացողի համար դրամա է, հայրենիքի համար՝ ողբերգություն»

Կալիֆոռնիայի Թեմերյան մշակութային միության հրավերով ԱՄՆ-ում էր գտնվում Նորայր Ադալյանը: Թեմերյանցիների ջանքերով եւ նախաձեռնությամբ մեզանում եւ սփյուռքում ճանաչված գրողի եւ հրապարակախոսի հետ կազմակերպվեցին ուշագրավ միջոցառումներ: Դրանց հիմնական նպատակն էր՝ մի կողմից ԱՄՆ-ում ստեղծել Նորայր Ադալյանի վերջին տարիների ստեղծագործությանն առնչվելու լայն հնարավորություն, մյուս կողմից՝ ավելի լավ ծանոթացնել ամերիկահայությանն այսօրվա Հայաստանի հոգեւոր-մշակութային կացությանը եւ խնդիրներին: Նորայր Ադալյանն այսօր «Ազգի» հյուրն է: Զրույցը վարում է Թամար Հովհաննիսյանը:

Ձախից աջ. Վալէ Սեմերջյան, Նորայր Ադալյան, Անգիկէ եւ Օշին Քէշիշեաններ

– Պրն Ադալյան, ամերիկահայ մամուլը լայնորեն նշում է միջոցառումների պակասելի քանակ, որում առանձնանում են Ձեր այցելությունը UCLA համալսարան, «Նոր սերունդ» միության նախաձեռնությամբ Հովհաննես Թումանյանի ծննդյան 130-ամյակին նվիրված երեկոյին Ձեր զեկուցումը «Թումանյանը եւ զորավար Անդրանիկը» թեմայով, Արշակ Տիգրանյան վարժարանում հարցապասխանի երեկոն Լոս Անջելեսի հայ մտավորականության հետ, Գլենդելի հանրային գրադարանում տեղի ունեցած Ձեր «Ապոկալիպսիս» վիպակի շնորհանդեսը, տարբեր լսարաններում անցկացրած զեկուցումները Հայաստանի գրական-մշակութային կյանքի մասին, նաեւ՝ ելույթներ եւ հարցազրույցներ Լոս Անջելեսի հայկական հեռուստատեսության ալիքներով:

– Սփյուռքահայության հետ իմ բազում հանդիպումների շրջանակում այցելությունս Նահանգներ երկար կմնա հիշողությանս մեջ՝ որպես մարդկային շփումների ջերմ ու անկեղծ արտահայտություն:

– Ինչպե՞ս է այսօր սփյուռքում ընկալվում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսը, որպես չիրականացած հին միտո՞ւմ, թե՞ նորաբուն արդիական մոտեցում:

– Այդ միտքը հնչել է տակավին 1946-ին, Հայաստանի գրողների երկրորդ համագումարում, Ավետիք Իսահակյանի բացման խոսքում. «Մի գրականություն, մի ժողովուրդ»: Եվ դժվար թե դրանից առաջ էլ հնչած չլինի: Սփյուռքի գոյության առաջին իսկ օրից այդ նպատակը որպես պատմական անհրաժեշտություն դրվել է հայ ժողովրդի առջեւ: Ժողովրդի հավաքականության գաղափարը պետք է ընդգրկի եւ հոգեւոր-բարոյական, եւ ֆիզիկական առումները: Դրա իրականացման առաջին քայլերն արվեցին 1946-ից, երբ մի քանի տարվա ներգաղթի ընթացքում Հայաստան եկավ շուրջ 300 հազար հայ: Այո, այսօր էլ սփյուռքում կա մայր հողի վրա միաձեղվելու գիտակցությունը: Սակայն, ցավոք սրտի, հաճախ արգելափակոցների է բախվում եւ փշրվում:

– Երեւի այդ հարցն ինքներս մեզ էլ պիտի ուղղենք:

– Անշուշտ: Ո՞ւմ համար է գաղտնիք, որ վերջին տարիներին Հայաստանից չորս անգամ ավելի շատ մարդ է արտագաղթել, քան ներգաղթել է 1940-ականներին: Շմեղադրենք գնացողներին: Բայց խորապես մտահոգվենք քաղաքական, սոցիալական, տնտեսական, բարոյական այն պատճառներով, որոնք մարդկանց ստիպում են հեռանալ հայրենիքից: Հայրենիքը ժողովրդով է հայրենիք, այլապես որքան էլ քաղցր ու նվիրական, ընդամենը բնակավայր է: Համոզված եմ, մեր ժողովրդի միասնացումը մայր հայրենիքում այսօր ամենակարեւորագույն ազգային խնդիրն է: Կիրականանա՞ այս խնդրի լուծումը՝ մեր հայրենիքն ապագա կունենա:

– Հայրենիք լքելը, ըստ Ձեզ, դրամա՞ է, թե՞ ողբերգություն:

– Լողի համար դրամա է, հայրենիքի համար՝ ողբերգություն:

– Դուք կարո՞ղ էիք չվերադառնալ:

– Ես դատապարտված եմ մեռնելու այստեղ: Եվ ինձ համար դա քաղցր դատապարտվածություն է: Պատճառնե՞րը... բազում են, բազմերանգ ու բազմամեղեդի: Եթե չեմ ապրում իմ պապենական երգնկա հողում՝ ապրեմ զավակներիս ծնեցյալ Հայաստանում: Եվ հետո... ինձ սիրում են այստեղ, եւ ես սիրում եմ: Այստեղի յասամանը ուրիշ բույր ունի:

– Հավանաբար գոյություն ունի մարդաբանական մի ինքնահատուկ տեսակ, որը գիտակցում է մարդկանց, հասարակայնության, հայրենիքի համար իր ներկայության անհրաժեշտությունը:

– Ես ԱՄՆ-ից վերադարձա իմ մարդկային եւ գրողական բնույթի թելադրանքով: Նաեւ մի ռոմանտիկ զգացողությամբ, թե էլի ինչ-որ բան կարող եմ անել հատկապես վերջին տարիներին դառնաղի հայրենիքիս համար: Ես դեռ հույս ունեմ, որ մեր հայրենիքը բարեբաղդվելու է:

– Իսկ ինչպե՞ս են նրանք ճանաչում մեզ...

– Մեզնից ավելի լավ եւ ավելի տխուր ոչ ոք չի կարող ճանաչել մեր հայրենիքը: Սոսկ փաստերի իմացությունը միայն է, որքան էլ հարուստ լինի սփյուռքահայի տեղեկատվությունը Հայաստանի մասին: Բայց ի տարբերություն մեզ, նրանց մոտ զգալիորեն թույլ է ամենակարեւորը՝ հայրենիքի կյանքի զգացողությունը, որը պետք է մշտապես ապրել եւ վերապրել: Այս առումով մենք, իհարկե, ավելի լավ ենք ճանաչում մեր երկիրը: Նրա մեջ ենք, նրա սովի ու անօրինականության կրողները: Հայրենիքի մասին մեր կարծիքն առավել ճշմարիտ է եւ ամփոփ:

– Զայրացուցիչ է սփյուռքում համատարած հանդիպող գրեթե պաշտամունքի հասնող սերը հայրենիքի թագավորների նկատմամբ, յուրաքանչյուր արագափոփոխի հանդեպ...

– Հավանաբար նրանք ուզում են հայկական նոր պետականության խորհրդանիշներ ունենալ:

– Դարերի ընթացքում պետականություն չունենալու իրողությունից ծնված բնազդ:

– Սակայն չի կարելի խաբվել արտաքին սիմվոլներով: Ամեն մի խորհրդանիշի հետեւում ու խորքում պետք է զգալ, տեսնել եւ գիտակցել երեւույթի ճշմարիտ պատկերը:

– Հայաստանի մամուլն ընթերցվո՞ւմ է ԱՄՆ-ում:

– Ցավո՞ք ոչ: Կարելի է ցանկանալ միայն, որ հանրապետության գլխավոր թերթերն ու ամսագրերը հնարավորություններ որոնեն իրենց ձայնը պարբերաբար լսելի դարձնելու սփյուռքի այդ ամենամեծ գաղթօջախում:

– Իսկ երաժշտությո՞ւնը... ժամանակին գնացողների հետ արտագաղթած եւ այժմ էլ հայրենիքից հրամցվող նույն մեծապատիվ պարոն ռաբի՞սն է...

– Հիմնականում՝ այո: Եվ մեծամասամբ մենք ինքներս ենք մեղավոր: Շատ դեպքերում սփյուռքը ճանաչում է մեզ այնքան եւ այնպես, ինչքան եւ ինչպես որ մենք «բացվում» ենք նրա առջեւ:

– Դուք մեկնել էիք Թեմերյան մշակութային միության հրավերով, որ Ռամկավար Ազատական կուսակցության մշակութային թեւն է: Ինչպիսի՞ն էր Ձեր նկատմամբ մեր ազգային մյուս կուսակցությունների ներկայացուցիչների վերաբերմունքը:

– Ես չեմ շփվել կուսակցական ղեկավարների հետ, այլ նրանց որոշ հասարակական ճյուղերի, մասնավորապես՝ մշակութային եւ հատկապես՝ մամուլի օրգանների: Ամենուրեք ինձ՝ անկուսակցականիս, ընդունել են իբրեւ իրենց բարեկամի, նեղ անձնական, նախանձախնդիր չկամություն էլ է եղել, բայց՝ ոչ կուսակցական առումով: Լինելով որոշակի քաղաքական գաղափարների կրողներ, ազգային կարեւոր հարցերում մեր կուսակցությունները միաբան են: Դա ուրախացնում է ինձ:

– Լոս Անջելեսում, Ձեր այցելության օրերին, տպագրվեց Ձեր «Ապոկալիպսիս» վիպակը: Ինչպես եւ հարկ էր նախատեսել, երկակի արձագանքներ-կարծիքների արժանացավ: Ըստ իս, դյուրին չէ ընթերնել գործի բուն էությունն ու ասելիքը, եթե թերի է այսօրվա Հայաստանի մասին պատկերացումն ու ճանաչումը: Մյուս կողմից, միանշանակ պարզ է, որ իր ընդհանրացման սիմվոլիկայի մեջ այն խորհրդանշում է ոչ միայն Հայաստանը, այլեւ 21-րդ դարի ահեղ կատակլիզմների շեմին կանգնած համայն քաղաքակիրթ աշխարհը, մեր մոլորակը: Ինչեւէ, սա, անշուշտ, առանձին եւ ծավալուն խոհերի նյութ է: Սակայն ինձ հետաքրքրում է՝ «Ապոկալիպսիսը» կգտնի՞ լայն ընթերցող, թե՞ կմնա կարդացողների նեղ շրջանակում:

– Կարծում եմ, ընթերցողները կլինեն ավելի շատ, քան իմ որոշ գործերի, իսկ ճիշտ ընթերնողները՝ ավելի հիշ:

– Ամերիկյան սփյուռքում առկա՞ է հոգեւոր Հայաստան ունենալու սթափ գիտակցությունը:

– Սթափ գիտակցությունը նույնիսկ մեզ մոտ այսօր առկա չէ:

– Սակայն, թվում է, որ հոգեւոր Հայաստան կերտելու եւ պահպանելու գաղափարը հիմնականում հայաստանցու ուսերին է ծառացած:

– Իսկ մի ժամանակ այդպես չէր: Վահան Թեմերյանը, Կոստան Զարյանը, Հակոբ Օշականը, Արշակ Չոպանյանը, սփյուռքահայ գործիչների եւ արվեստագետների հատկապես այդ սերունդը եւ նրանց լավագույն հետնորդները, հոգեւոր Հայաստանի դրոշակակիրներն էին: Ցավոք, այսօր եւ սփյուռքը, եւ Հայաստանը նահանջել են այդ ավանդույթներից: Հոգեւոր Հայաստանը սոսկ գրական-մշակութային ասպարեզ չէ, այլ՝ ազգային, հասարակական, քաղաքական ու պետական դաշտ:

– ...Գնում ենք եւ վերադառնում... այսօրվա դաժանաբարո, ոգեզուրկ հայաստանյան իրականության մեջ ամեն վերադարձի հետ աղոտ հույսի սերմի հասիկ ցանելու փափագով:

Ավստրալիայի գլխավոր «փոստարը» հայ է

Սիդնեյաբնակ Հերոս Դիլանջյանը լայնամասշտաբ փոստային գործունեություն է ծավալել

Երբ ձեր փոստարկղից նամակներ եք հանում, երբեւէ մտածո՞ւմ եք՝ ով է կազմակերպում դրանց արագ փոխադրումը: Այսօր արդեն այդ աշխատանքը մեքենաներն են անում: Ավստրալիայում փոստի ծառայություններից հաճախակի օգտվողների 95 տոկոսը դիմում է Հերոս Դիլանջյանի Ինքնշխատ փոստային ընկերությանը՝ վստահ փոխադրումների արագությանը եւ ճշգրտությանը: 46-ամյա Դիլանջյանի էլեկտրոնային օգնականները ստանում են նամակները, չեկերը եւ փաստաթղթերը, տեսակավորում դրանք, ուղարկում անհրաժեշտ ուղղությամբ, երբեք չեն սխալվում, չեն հոգնում, աշխատավարձի բարձրացում չեն պահանջում եւ տուն չեն գնում՝ նախաճաշելու: Դիլանջյանի կյանքն արտասահմանում հաջողության հասած հայի տիպիկ օրինակ է: Փոստային ծառայությունների աշխատանքի մեջ փաստորեն հեղափոխություն իրականացրած Դիլանջյանը ծնվել է Իրանում, Ավստրալիա է եկել 16 տարեկանում, իսկ 35-ում արդեն ամենահաջողակ գործարարներից էր համարվում: Մինչ այդ նա 15 տարի աշխատում էր մի փոստային ընկերությունում՝ հասարակ օպերատորից հասնելով արտադրական մենեջերի պաշտոնին եւ ընթացքում սովորելով այն ամենը, ինչ կարելի էր սովորել: Ապա առանց մասնագիտական կրթության ինժեներ-մեխանիկը, ընթանալով բիզնեսի պահանջները, ստեղծեց իր նոր ավելի կատարելագործված մեքենան, որը 3 անգամ ավելի արագ է աշխատում, քան մինչ այդ եղածները: Իհարկե, սա էլ իր թերություններն ունի՝ կրճատվում են աշխատատեղերը, սակայն կարեւոր է, որ պահպանվում է անձի գաղտնիքի իրավունքը՝ չէ՞ որ մեքենային չեն հետաքրքրում մարդու բանկային հաշիվներն ու մասնավոր թվերը: «Եվ բացի այդ՝ չէ՞ որ գնում ենք անթուղթ դարաշրջան», ասում է Դիլանջյանը, որը չի դադարում հպմակարգիչների օգնությամբ կազմել ավելի կատարելագործված մեքենայի մոդելը՝ ծախսելով ընկերության շահույթի 50 տոկոսը:

Այսօր Ինքնշխատը միջազգային ընկերություն է, որը գրասենյակներ ունի Ավստրալիայում, Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում, Չինաստանում, Կորեայում, Մալայզիայում, Սինգապուրում եւ Նոր Զելանդիայում: Նրա ծառայություններից օգտվում են Ավստրալիայի բոլոր բանկերը, հեռուստահաղորդակցության հսկաները, բժշկական-առողջապահական հիմնարկները: Ընկերությունում աշխատում են շատ հայեր, չիլիացիներ, մեքսիկացիներ եւ տեղացիներ:

AIM

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Ալբանական մաֆիան ուժեղագույններից է Եվրոպայում

Ալբանական մեծ հանցախմբերն սկսել են կազմավորվել դեռ կոմունիստական վարչակարգի օրոք: Ներկայումս ալբանական մաֆիան Եվրոպայում ուժեղագույններից մեկն է եւ ֆինանսավորում է մասնավորապես Կոսովոյի ազատագրության բանակի գործողությունները: Այս հանցախումբը կազմված է երեք մեծ «ընտանիքներից»: Առաջինը երբեմնի կոմունիստ ղեկավար Էնվեր Խոջայի ժառանգորդներն են: Պարագլուխը Ալբանիայի 1997-1998 թթ. ներքին գործերի նախարար Գրամոզ Ռուչին է: Այս խումբն զբաղվում է ծխախոտի, զենքի եւ անշարժ կայքի անօրինական առեւտրով: Երկրորդ «ընտանիքը» կազմված է գլխավորապես նախկին գաղտնի ոստիկանության գործակալներից: Պարագլուխներն են Պելումբ եւ Բեսնիկ Կաղո եղբայրները եւ Սաբիհ Բրոկաջը: Բեսնիկ Կաղոն ժամանակին Բեյրութում զբաղվել է զենքի գաղտնի առեւտրով, նրա եղբայրը գաղտնի ոստիկանության երկրորդ դեմքն է եղել, իսկ Բրոկաջը ծովափնյա Վլորե քաղաքի պատգամավորն է: Այս «ընտանիքի» ոլորտներն են զենքի ու թմրանյութերի գաղտնի առեւտուրը, գաղթականների ընդհատակյա տեղափոխումը, պոռնկությունը: Երրորդ մեծ հանցախմբի՝ «հյուսիսցիների» պարագլուխը նախկին ներքին գործերի նախարար Ազրոն Մուսարաջն է: Նա զբաղվում է Թուրքիայից ու Լիբանանից բերվող թմրադեղերի գաղտնի առեւտրով եւ համարվում է աշխարհի ամենահարուստ ալբանացին:

Ադրիատիկ ծովի ափին գտնվող Վլորե քաղաքն ալբանական հանցախմբերի գործունեության կիզակետն է: Նախկին ձկնորսներն արագընթաց փչովի նավակներով այստեղից Իտալիա են տեղափոխում ինչպես թմրադեղեր, այնպես էլ ընդհատակյա գաղթականների: Իտալական ոստիկանությունը չի կարողանում կասեցնել այս երթեւեկը, քանզի կաշառքը շատ լայն չափեր է ընդունել: Ինչպես տեղեկացնում է «Պուեն» հանդեսը, նույնիսկ մայրաքաղաք Տիրանայից Վլորե բերված «հատուկ ուժերը» ժամը 22-ից հետո վախենում են մոտենալ ծովափին, քաջ գիտենալով, որ այնտեղ սկսվում է սրկավաճառությամբ եւ ընդհատակյա առեւտրով զբաղվող ծովագաղթի ալիքը: Վլորեի փողոցներում կարելի էր տեսնել բազմաթիվ չինացիների, լանկացիների, հնդիկների, հրդեհի եւ աֆրիկացիների: Ալբանիայի հյուսիսային շրջանների աղքատ բնակիչները, իսկ ավելի ուշ սերբերից հալածված կոսովցիները եւս խառնվեցին հարյուր հազարավոր բշվառ օտարականներին, որոնք պատրաստ էին իրենց բոլոր խնայողությունները զոհաբերել «երանավետ» Արեւմտյան Եվրոպա հասնելու համար: «Պուեն» հանդեսը նշում է, որ ծովային ճամփորդությունների ժամանակ ընդհատակյա գաղթականներին հաճախ կողոպտում են, իսկ երբեմն էլ ծովն են նետում, եթե Իտալիայում ափ դուրս գալու պահին բռնվելու վտանգ է ծագում: Մեկ անձի տեղափոխման սակագինը 400 դոլար է:

Ինչ վերաբերում է թմրադեղերին, Ալբանիայում ներկայումս լայն ծավալով սկսել են մարիխուանա արտադրել: Վլորեի մերձակա որոշ գյուղեր թմրադեղերի առեւտրականների զինված պաշտպանության տակ են, ինչպես Բեհայի հովտի գյուղերը Լիբանանում: Նավակավարներին է պատկանում թմրադեղն Իտալիա տեղափոխելու մենաշնորհը: Եթե ծերբակալման վտանգ է հայտնվում, նրանք բեռը ծովն են գցում: Ի դեպ, ծերբակալման հետ կապված վտանգը չնչին է առեւտրականների շահույթների համեմատությամբ:

Բալկանների պատերազմը հանգեցրեց նաեւ հերոինի ու կոկաինի տարանցման ուղիների փոփոխմանը: Հերոինը ներկայումս բերվում է Բուլղարիայից ու Մակեդոնիայի եւ արդեն Վլորե ու Պուրես քաղաքներով տեղափոխվում է Արեւմտյան Եվրոպա: Տվյալ դեպքում փչովի նավակներից ավելի շատ օգտագործվում են լաստանավերով փոխադրվող բեռնատարների գաղտնարանները: Նույն ձեւով է տեղափոխվում նաեւ կոկաինը, որն Ամերիկայից օդանավերով հասցվում է Տիրանա, որտեղ հետագայում շրջանցում է կաշառակեր մաքսավորներին:

Թմրադեղերի հետ կապված խոշոր շահույթները վերջին տարիներին ծնել են նոր ծանր հանցածել՝ պատանդ վերցնելը եւ սպանելը: Միայն այս տարի հաշվեհարդարների ընթացքում զոհվել է 26 մարդ: Վերջերս նավակատերերը պատանդ էին վերցրել նույնիսկ Վլորեի ոստիկանապետ Սոկոլ Կոչյունին: Ազատվելուց հետո նա լրագրողներին պատմեց, որ իր առեւանգմանը ներկա է եղել չորս տասնյակ ոստիկան, որոնք հանգիստ դիտել են եւ ոչինչ չեն ձեռնարկել ելուզակների դեմ: Պատճառն այն է, որ ոստիկանները հիշ են վաստակում, իսկ թմրադեղերի առեւտրականները դրա եռապատիկն են տալիս, որպեսզի կարգի պահապանները «չնկատեն» որոշ բաներ: Կոչյուն պնդում է, թե Վլորեի ոստիկանների 70 տոկոսը կաշառք է վերցնում: Բայց ամենավատը քաղաքական գործիչների կաշառակերությունն է: Վլորեի երկու պատգամավորները, որոնցից մեկը խորհրդարանի նախագահն է, մյուսը՝ Ալբանիայի նախագահի զինվորական խորհրդականը, ակնհայտորեն կապված են հանցախմբերի հետ:

Արեւմտյան Եվրոպայում բնակվող կոսովցիներն իրենց եկամուտների 3 տոկոսը հատկացնում են Կոսովոյի ազատագրության բանակին: Միայն Շվեյցարիայում ապրում է 180 հազար, Գերմանիայում՝ 150 հազար կոսովցի: 1980-ական թթ. վերջերից կոսովցիները տնօրինում են Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Չեխիայի եւ Շվեյցարիայի հերոինի շուկան եւ զենքի ուժով ասպարեզից հեռացնում են իրենց ախոյաններին՝ թուրքական եւ լիբանանյան մաֆիաներին: Բեռնում գտնվող թմրադեղերի կենտրոնական վարչության տվյալներով, «եթե թուրքերն ու լիբանանցիները միջին հաշվով 2 կգ թմրադեղ էին փոխադրում, ապա կոսովցիներն այժմ տեղափոխում են 20 կիլոգրամանոց բեռներ եւ այդպիսով կարողանում են իջեցնել գները»: 1998 թ. նոյեմբերին Լոգանի ոստիկանությունն առգրավեց միանգամից 44 կգ հերոին եւ ծերբակալեց 73 անձանց, որոնց մեծ մասը Շվեյցարիայում ապաստան խնդրած կոսովցիներ ու ալբանացիներ էին:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ԲԵՐԻՇՅԱՆԸ

ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ

Ճգնաժամը կարծես թե հարթվում է

Ըստ երեւույթին, Անկարայի եւ Թեհրանի միջեւ եղած լարվածությունը մեղմացել է, երբ հուլիսի 28-ին թուրքական ռազմաթեխնիկական 40 փորձագետից կազմված պատվիրակությունը սկսեց հետաքննել իրանական մեղադրանքները, որ թուրքական օդուժը ռմբակոծել է Արեւմտյան Ատրպատականի նահանգի Փիրանշահրի եւ Խոյի շրջանները, որի հետեւանքով եղել են զոհեր եւ վիրավորներ: Հանգստացնող այս մթնոլորտն ամրապնդվեց թուրքական պատվիրակության նախագահ, գեներալ Վեֆիզ Ղուլուի հայտարարություններով, երբ նա փոխանցեց իր երկրի ղեկավարության ծգտումը՝ Իրանի համար որեւէ խնդիր չստեղծելու եւ կապը զարգացնելու: Ինչպես հաղորդել են Իրանի տեղեկատվական միջոցները, Արեւմտյան Ատրպատականի ռազմական շրջանի հրամանատար, գեներալ-մայոր Համ Տուը հավաստել է, որ Թեհրանը ոչ արտոնել է, ոչ էլ արտոնելու է թուրքական ընդդիմության (իմա՝ PKK-ի) տարրերի մուտքը Իրան: Նա հայտնել է նաեւ իր երկրի պատրաստակամությունը՝ այս ոլորտում թուրքական բանակի հետ համագործակցելու:

Ըստ Թեհրանի ռադիոյի, թուրքական պատվիրակությունը զննել է չոլայթած մի հրթիռ, որը թուրքական ինքնաթիռները նետել էին իրանական տարածքի վրա: Ինչ վերաբերում է Իրանում զերի վերցված թուրք 2 զինվորների ազատ արձակմանը, ապա առայժմ ոչինչ հայտնի չէ, մանավանդ Անկարայում իրանական դեսպանությունը հերքել էր հուլիսի 28-ին նրանց ազատ արձակելու մասին լուրը: Նշենք նաեւ, որ 2 կողմերը հավաստիացրել են, որ հաստատելու են անվտանգությունն իրենց համատեղ սահմանում:

Ըստ ամենայնի, բոլորովին էլ պատահական չէր Անկարայի հրահրած ճգնաժամն իր արեւելյան հարեւանի հետ: Ի սկզբանե ակնհայտ էր, որ Թուրքիան հակված չէր լայնածավալ զինված հակամարտության, այլ որոշ ազդանշաններ հաստատեց Օջալանի մահավճռի պատվակով նրանից երես թեքած եվրոպիությանը առ այն, որ նա ի վիճակի է ապակայունացնել իրադրությունը եվրաընտանիքի համար բավականին կենսական մի տարածաշրջանում, ինչպես Միջին Արեւելքն է: Մյուս կողմից, հավանական է, որ Վաշինգտոնի եւ Թել Ավիվի պատվերով Անկարան զսպող հակակշիռ ստեղծելու միտում ուներ ընդդեմ Թեհրանի: Սա այն պարագայում, երբ ի հայտ են եկել արաբ-իսրայելական խաղաղության բանակցությունները վերսկսելու նախանշաններ: Իսկ ինչպես հայտնի է, Իրանը չի ցանկանում այդ գործընթացի խաղից դուրս մնալ եւ օգտագործում է իր լծակներն այդ նպատակին հասնելու համար: Այս շրջանակի մեջ է մտնում վերջերս Անկարայի ցուցաբերած սիրաբանության խաղախաղությունը Իրանի ռազմավարական բարեկամներ Սիրիայի եւ Հունաստանի նկատմամբ:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Ձեւք է վաճառում նույնիսկ չեզոք Շվեդիան

Դժվար է լինել սոցիալ-դեմոկրատական չեզոք երկիր եւ միաժամանակ զենք արտադրել: Այդ վիճակում է հայտնվել Շվեդիան: Շվեդ հայտնի գինվաճառ Բոֆորսը դեռ 1986 թ. Հնդկաստանին վաճառել էր 155 միլիմետրանոց 410 հրանոթ: Դա զվեդական զենքի հետ կապված խոշորագույն գործարքն էր, որի գումարը կազմում էր ավելի քան 1,4 մլրդ դոլար:

Բայց արդեն 1987 թ. պարզվեց, որ այդ գումարն ընդգրկում է նաեւ հնդիկ բարձրաստիճան պաշտոնյաներին տրված 50 մլն դոլար կաշառքները: Հնդկաստանի այն ժամանակվա վարչապետ Ռաջիվ Գանդիին նույնպես մեղադրեցին կաշառակերության մեջ: Պատմությունն այնպիսի արձագանք ստացավ, որ 1989 թ. Հնդկաստանն սպիտված դադարեցրեց զենքի գնումները Բոֆորսից: Այս բոյկոտը շարունակվում էր ընդհուպ Քաշմիրի վերջին հակամարտությունը:

Քաշմիրի մարտերի ընթացքում պարզ դարձավ, որ Հնդկաստանին շատ հարկավոր են հրանոթների պահեստամասեր: Ուստի Դելիի կառավարությունը որոշեց չեղյալ հայտարարել իր իսկ սահմանած բոյկոտը: Բոֆորսն ուրախությունից ձեռքերն էր շփում, քանի որ Հնդկաստանը «հնարավորին չափ շուտ» ուզում էր 400 հավելյալ հրանոթ:

Բայց նոր գործարքը Շվեդիայում բողոքի փոթորիկ բարձրացրեց: Սոցիալ-դեմոկրատների դաշնակից Չախ կուսակցությունը եւ Կանաչները խստիվ քննադատեցին պատերազմող երկրին զենք վաճառելու կառավարության որոշումը: Կառավարությունը փորձեց արդարանալ վկայակոչելով 1986 թ. պայմանագիրը, որը Բոֆորսին պարտավորեցնում է պահեստամասեր մատակարարել Հնդկաստանին եւ վաճառքից հետո սպասարկում առաջարկել: «Պուեն» հանդեսը նշում է, որ Շվեդիայի առեւտրի նախարարությունում այն տեսակետն է արտահայտվում, թե տվյալ գործարքի ձախողումը միջազգային զինամատակարարման ասպարեզում կվնասեր Շվեդիայի հեղինակությանը:

Անշուշտ, կառավարությունը նաեւ չի ուզում դիմչել զինավաճառ Բոֆորսի շահերին, որն առանց այդ էլ տուժել է Շվեդիայի անվտանգությանն ուղղված բյուջետային հատկացումների կրճատման հետեւանքով:

Պ. Ք.

Ազգաբնակչության աճը Երուսաղեմում հոգուս արաբների

Երուսաղեմում ազգաբնակչության տեղաբաշխման մասին իսրայելական մի ուսումնասիրության համաձայն պարզվել է, որ պաղեստինցիների թիվը շատ ավելի մեծ արագությամբ է աճում, քան հրեաներինը: «Իսրայելական հետազոտությունների ինստիտուտի հրատարակած զեկուցագրում նշվել է, որ հրեաները դեռեւս կազմում են քաղաքի բնակչության երկու երրորդը: Սակայն մինչ վերջիններիս տարեկան աճը հասնում է 1 տոկոսի, պաղեստինցիները կազմում են 3,5 տոկոս: Նույն աղբյուրը այս իրավիճակի պատճառ

ԱԶԳ

Մշակույթ

Կտրելն ավելի հեշտ էր, քան կապելը

Երեկ Երեւանում բացվեց ԱՊՀ երկրների երիտասարդության հարցերի գծով «Նախարարների ակումբի» հերթական նստաշրջանը, որին մասնակցում են Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունները: Սպասվում է նաեւ Տաջիկստանի պատվիրակության այցը: Հայաստանի պատվիրակությունը գլխավորում է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Վահրամ Բարսեղյանը, որը հենց առաջին ելույթն ունեցավ առաջին օրվա պլենար նիստում:

Վերջին տասնամյակում Խորհրդային Միություն կոչված պետության ավերումից հետո այս երկրների երիտասարդների միջեւ եղած կապերը գրեթե ամբողջությամբ խախտվեցին: Եվ այժմ մեծ ջանքեր են պետք համագործակցության եզրեր գտնելու համար: Այս ծրագրով անցկացված նախորդ հանդիպումների ժամանակ արդեն մի քանի երկկողմանի պայմանագրեր են կնքվել: Առաջին օրվա խորհրդակցության ժամանակ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ կնքվելիք պայմանագրի մասին էին անընդհատ խոսում Վրաստանի պատվիրակության ղեկավար, երիտասարդության հարցերի Վրաստանի պետդեպարտամենտի նախագահ Զ. Գաիպարաշվիլին եւ նույն դեպարտամենտի միջազգային հարաբերությունների վարչության պետի տեղակալ Յու. Լուկաշվիլին: Սակայն նրանց խոսքն ասես ինչ-որ տեղ «միավոր շահելու» տպավորություն էր թողնում, որովհետեւ իրենք շեշտում են, որ առաջարկել են այդ պայմանագիրը, իսկ մերոնք ոչ մի հատուկ պատասխան չեն տվել:

Ինչեւէ: Հույս ունենանք, որ Երեւան ժամանելուց հետո առաջին գիշերը չքնած բելառուսներն ու վրացիները, ավելի շատ նախորդ Բաքվի հանդիպման արդյունավետությունը շեշտող ադրբեջանցիները, առայժմ անկողմնակալ հանդես եկող ռուսները կկարողանան արդյունավետ դարձնել այս հանդիպումը եւս: Ամեն դեպքում «Ազգի» թղթակցի հետ զրույցի ժամանակ այդպիսի հույս հայտնեցին Բելառուսի երիտասարդության հարցերի պետական կոմիտեի նախագահ Ալեքսանդր Պոզնյակը եւ Ադրբեջանի երիտասարդության հարցերի գլխավոր վարչության պետ Թահիր Սուլեյմանովը:

Այս անգամ «Նախարարների ակումբի» նստաշրջանը տեւելու է երեք օր:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

«Մարդն է հոգով անհաղթ...»

Քանդակագործ Սուրեն Նազարյանն իր մահկանացուն կնքեց Լոս Անջելեսում այս տարվա հունվարի 16-ին: Նրա հուղարկավորությունը կայացավ Երեւանում, փետրվարի 8-ին, Հայաստանի նկարիչների միության շենքից:

Այդ օրը լի էր բախիծով: Հավաքվել էին նրա մտերիմները, նրան ճանաչողները: Քանդակագործը Հայաստանից մեկնել էր 1991 թվականին, սակայն իր ողջ էությամբ կապված էր մայր հողին, հնարավորությունների ներածի չափ գալիս էր Երեւան, իսկ վերջնականապես պետք է վերադառնար մեկ եւ կես տարի անց: Վերադարձավ անյունասփոռը...

Կենսագրական սեղմ տվյալներում ամփոփված է 70-ամյա քանդակագործի կյանքի ճանապարհը՝ ծնվել է 1929 թվականին, հուլիսի 30-ին, Երեւանում: Սովորել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում, հմտացել ու իրեն փայլուն դրսեւորել մոնումենտալ արձանագործության բնագավառում:

Հայաստանի ժողովրդական քանդակագործի պատվավոր կոչումը նա վաստակել էր իր վարպետությամբ, բուռն խառնվածքով, ստեղծագործական վերելքներով ու անմնացորդ նվիրումով այս բնագավառին:

Այսօր Երեւանում մեր տեսադաշտից անբաժան է միջնադարյան մտածող ու բանաստեղծ Ֆրիկի արձանը՝ Մատենադարանի առջեւ, ստեղծված 1967 թվականին:

Նորի զանգվածում 1977 թվականին կանգնեցվեց զորավար Հայկ Բժեշկյանցի (Գայ) արձանը՝ բրոնզից: Կոմպոզիցիոն այս աշխատանքն այլի է ընկնում իր համոզիչ լուծումներով, ինչպես նաեւ քանդակի հնարավորությունների լիակատար դրսեւորմամբ: Ուշադրության արժանի է նաեւ բազմաֆիգուր բարձրանդակը՝ բազալտից: Ճարտարապետն է Ս. Գուրզադյանը:

Քանդակագործ Սուրեն Նազարյանի աշխատանքների ցանկը հարուստ է եւ ընդգրկուն, արժանի հիշատակման վարպետ կատարմամբ ու ստեղծագործական հիանալի լուծումներով: Նշենք Երեւանում, Շահումյանի շրջանում տեղադրված բրոնզե քանդակախումբը՝ նվիրված հաղթանակի 40-ամյակին: Ուշագրավ են նաեւ Սանահինում 1982 թ. տեղադրված ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանի հուշահամալիրը, որի ճարտարապետն է Ս. Գուրզադյանը եւ դեռեւս 1970 թ. իրագործված՝ Չարենցավան քաղաքի մուտքի դղնձակուռ հուշակոթողը: Նշենք նաեւ զոհված հերոսի հուշարձանը Ղազախստանի Տենիրբաու քաղաքում 1974 թ. եւ Գայի արձանը Ուլյանովսկում (1981 թ.):

Կյանքի վերջին երկու տարիներին քանդակագործը ստեղծել է 50 դիմաքանդակ՝ նվիրված հայ մտավորականներին. մարմարից կերտել է Վարդան Մամիկոնյանի արձանը: Բայց ընդհատվեց քանդակագործի ստեղծագործական ճանապարհը, եւ շատ ծրագրեր մնացին անավարտ, այդ թվում մեր Ազգային պատկերասրահի շենքի քանդակային ձեւավորումը: Այդ նպատակով նա բաց նամակով դիմել էր հանրապետության նախկին նախագահին՝ անվարձահատույց իրագործելու, քանի որ տարիներ առաջ ինքն արդեն շահել էր այդ իրավունքը նոպատակային մրցանակաբաշխությամբ:

Քանդակագործը գրել է նաեւ բանաստեղծություններ, լրացրել իր հուշերի տողերը:

«Ինչ է կյանքը, ինչ է մահը... Մարդն հոգով է անհաղթ...»: Այս է Սուրեն Նազարյանի կենսափիլիսոփայության արմատը:

«Ամեն ինչ նկատում էր, եւ տխուր էր, եւ ուրախ», ավելացնում են նրան ավելի մոտիկից ճանաչողները:

Այսօր հայ քանդակագործներից շատերը Սուրեն Նազարյանի սաներն են, նրա նախկին ուսանողները, քանի որ վարպետը 1957-1973 թթ. դասավանդել է Երեւանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, իսկ 1969-74 թթ. միաժամանակ Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում: Ներկայիս մեր քանդակագործության սերուցքը հանդիսացող քանդակագործներից՝ Ե. Գոչաբաշյանը, Ա. Շիրազը, Յու. Պետրոսյանը, Հ. Հովսեփյանը, Գ. Ղազարյանը, Լ. Վարդանյանը եւ ուրիշներ ակնածանքով են հիշում իրենց վարպետին:

ԳԱԲՐԻԵԼ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Փայլուն ելույթներ ԱՄՆ-ում

Երիտասարդ եւ տաղանդաշատ երաժիշտ Վահագն Հայրապետյանի յուրաքանչյուր ելույթ ուրախություն եւ գոհունակություն է պատճառում ունկնդիրներին: Նա ելույթներ է ունեցել աշխարհի շատ երկրներում, բազմաթիվ մրցանակներ շահել:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ Վահագն Հայրապետյանը փորձառու է ինչպես դասական երաժշտության կատարման մեջ, այնպես էլ ջազում:

Վերջերս երիտասարդ երաժիշտը եզրափակեց իր փայլուն ելույթները Նոր Օռլեանում: Այստեղ նա չորրորդ անգամ մասնակցեց ամենամյա ավանդական «JAZZ» միջազգային փառատոնին:

Հանրահայտ ջազմենը եւ դաշնակահարը բազմիցս հանդես եկավ նշանավոր երաժիշտների ու երգիչների ընկերակցությամբ: Ինչպես նախկինում, այս անգամ եւս Վահագնի ելույթները բարձր գնահատականի արժանացան մասնագետների եւ ունկնդիրների կողմից:

Ամերիկյան հյուրախաղերին էր նվիրված երեկվա մամլո ասուլիսը: «Ջազարտ» ընկերության նախագահ Լեւոն Մալխասյանը, մշակույթի զարգացման բարեգործական հիմնադրամի տնօրեն Սամվել Մեսրոպյանը Վահագն Հայրապետյանին բնութագրեցին որպես հայկական ջազային երաժշտության դեսպան արտերկրում:

Վահագն Հայրապետյանը պատմեց ջազի միջազգային փառատոնին իր մասնակցության, ինչպես նաեւ ամերիկացի գործընկերների հետ համագործակցության մասին եւ պատասխանեց ներկաների բազմաթիվ հարցերին:

ՀՐԱՉՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ

Հայ ճարտարապետության յուրահատուկ հանրագիտարան

Դարիս հայ ճարտարապետության յուրահատուկ հանրագիտարան է Հայաստանի ճարտարապետների միության կենսագրական համառոտ տեղեկատուն, որը լույս է տեսել վերջերս, այդ ստեղծագործական միության համագումարի նախօրեին ու նվիրված է ճարտարապետների միության 60-ամյակին: Շնորհակալ ու ազգանվեր գործ է արել հեղինակ, կազմող Լիա Սաֆարյանը՝ ճարտարապետ Սամվել Սաֆարյանի դուստրը, ճարտարապետ Սպարտակ Խաչիկյանի տիկինը, ինքը՝ ճարտարապետ ու երիտասարդ ճարտարապետ Աստղ Խաչիկյանի մայրը:

Ժողովածուում հավաքված է շուրջ 900 անուն, եւ դա առաջին փորձն է համակարգի մեջ դնելու մեկ՝ 20-րդ դարի հայ ճարտարապետների կյանքն ու գործը: Գրքում գետեղված անունները միավորված են տարիքային սկզբունքով եւ պայմանականորեն բաժանված են 13 ժամանակաշրջանի:

Գրքում դուք կհանդիպեք ճարտարապետների, քաղաքաշինարարների, տեսաբան գիտնականների, քարտաշների, վարչական աշխատողների: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ճակատագիրը, իր ծեռագիրը, ստեղծագործական իր դավանանքը, շատերի անունն անարդար կերպով մոռացության է տրվել:

Գիրքն ընթերցվում է մեկ շնչով: Չեր այլի առջեւ անցնում են Հայաստանի ճարտարապետական դիմանկարի հեղինակները՝ դասական Ալեքսանդր Թամանյանից, Թորոս Թորամանյանից ու Ռաֆայել Իսրայելյանից մինչեւ Արթուր Թարխանյան, Հրաչիկ Պողոսյան, Սպարտակ Խաչիկյան, ճարտարապետների երիտասարդ սերունդը:

Եվ ահա շուռ է տված գրքի վերջին էջը: Եսեւում գործերն են մարդկային, որոնք մնալու են պատմության մեջ ու կժառանգվեն հետնորդներին, նշում է հեղինակը: Առջեւում հայ ճարտարապետների նոր սերունդներն են: Նրանց է վիճակված կառուցել ապագայի քաղաքները, հիշողություն պահպանել անցյալի մասին, քանի որ անցյալի հիշողությունը ոչ միայն պատմական փորձի յուրացման միջոց է, այլեւ խթան՝ առաջ ընթանալու համար: Եվ թող 21-րդ դարը բացի նոր ժամանակին արժանի ստեղծագործության հեռանկարները, ցանկանում է հեղինակը:

Դարիս հայ ճարտարապետությունն ապրել է ամենատարբեր շրջաններ, եւ դա ցայտուն կերպով երեւում է գրախոսվող ժողովածուում. եթե ավագ սերնդի ստեղծագործողները թողել են ծանրակշիռ գործեր, որոնք իրավամբ եղել ու մնում են ազգային մշակույթի փառքը, ապա այսօրվա երիտասարդ ճարտարապետները ստիպված են բավարարվել փոքր ճարտարապետական ծեւերով, ռեստորանների, առանձնատների հատակագծերով, գրասենյակների ծեւավորմամբ: Հայ ճարտարապետներն իրենց հետքն են թողել ոչ միայն Հայաստանում, այլեւ հանրապետության սահմաններից դուրս՝ Բաքվում, Թբիլիսիում, Մոսկվայում ու ստալինյան բռնությունների բերումով՝ Նորիլսկում, հեռավոր արտասահմանում:

Շափազանց կարեւոր է, որ գրքում նշված են նաեւ ճարտարապետական ընտանիքներն ու գերդաստանները: Չէ՞ որ դա եւս մեր ազգային ճարտարապետության բարի, առողջ ավանդույթների պերճախոս ցուցանիշն է:

Գիրքը պարունակում է հարուստ տեղեկություններ, որոնք կարող են գյուտ դառնալ հետաքրքրասեր ընթերցողի համար: Օրինակ՝ ով՞ գիտի, որ առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին բեղմնավոր ճարտարապետ էր եւ հեղինակն է Երեւանում, Բաքվում, Գյումրիում, Արմավիրում, Սպարտակում մի շարք արդյունաբերական եւ բնակելի շենքերի հատակագծերի:

Մեզ թույլ ենք տալիս մեծարգո տկն Լիա Սաֆարյանի ուշադրությունը հրավիրելու մի քանի բացթողումների վրա, որոնք, ցավոք, վնասում են արժեքավոր ժողովածուի ամբողջությանը:

Նախ, ցանկալի կլիներ, որ գիրքն ունենար անվանացանկ:

Երկրորդ, տալով ճարտարապետների ծննդյան վայրերը, ժողովածուն «մոռանում» է նշել դրանց շրջանային ենթակայությունը, դա հիմնականում վերաբերում է գյուղական բնակավայրերին: Օրինակ՝ այսինչ այսինչյանը ծնվել է Դարոյաս գյուղում. դժվար թե զանգվածային ընթերցողն, առավել եւս Հայաստանից դուրս, իմանա, որ Դարոյաս գյուղը գտնվում է Սիսիանի շրջանում:

Քաջ գիտակցելով, որ այս առաջարկը կբանկացնի տպագրության ծախսերը, սակայն հաշվի առնելով աշխատության հիրավի հանրագիտարանային արժեքը, ցանկալի կլիներ, որ այն լիներ կոշտ շապիկով:

Նշված եւ մի շարք այլ մանր թերություններ ոչ մի դեպքում չեն նսեմացնում ժողովածուի մեծ արժեքը: Ուստի պիտի երախտիքի մեր խոսքն ուղղենք հեղինակին՝ տկն Լիա Սաֆարյանին, Հայաստանի ճարտարապետների միությանը, որի նախաձեռնությամբ ու միջոցներով է հրատարակվել ժողովածուն, եւ հույս հայտնենք, որ գիրքը լույս կտեսնի նաեւ հայերեն ու օտար լեզուներով, ավելի մեծ տպաքանակով (այս անգամ տպագրվել է միայն 500 օրինակ):

Գիրքը ձեռք բերելու համար կարելի է դիմել երեւանի ճարտարապետների տուն (Մարշալ Բաղրամյան 17), հաշվառիություն:

ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՅԱՆ

ԱՆԴՐԱԳԱՐԱ

«Ռայոնները» բաժանվում են 3 մասի՝ մեծ, ավելի մեծ, ամենամեծ...

«Ազգ» թերթի հուլիսի 14-ի համարում տպագրվել է ռեալիկ Լոռու մարզում «Հայլուրի» կեսգիշերային թողարկումը ընդհատելու եւ ազգային հեռուստատեսության շաբաթօրյա ցերեկային ծրագիրը չհեռարձակելու մասին: Ազգային հեռուստատեսության տնօրեն Տիգրան Նաղդալյանը շատ բարեհամբույր խոստացել է հարցը կարգավորել: Հիշեցնենք, որ ըստ նրա բացատրության, ազգային հեռուստատեսության հեռարձակման համար պետպատվերով ընդամենը 7 ժամ է նախատեսված: Իսկ հեռուստատեսության եկամուտների հաշվին արտաժամ միայն հնարավորություն կա ֆինանսավորել հեռարձակումը երեւանում եւ Արարատյան դաշտավայրում: Չնայած այս ամենին, Տիգրան Նաղդալյանը հավաստիացրեց, որ «բոլորին էլ տեղերում զգուշացվում է, որ հեռարձակումն անջատվի միայն «Հայլուրից» հետո: Եւ մոտ օրերս կպարզեմ թյուրիմացությունը»:

Օրերը դարձան շաբաթներ, բայց լոռեցիները հնարավորություն չստացան դիտելու «Հայլուրի» կեսգիշերային թողարկումը: Բազմիցս համոզվել ենք, որ մայրաքաղաքի պատճառները համահարթորեն են վերաբերվում «ռայոնների» հիմնահարցերին: Վերջերս արդեն նաեւ խտրականություն է դրվում մոտիկ եւ հեռու «ռայոնների» միջեւ: Սակայն պրն Նաղդալյանին պատիվ չի բերում խոստումը չկատարելը, մանավանդ որ Հայաստանը միայն երեւանն ու Արարատյան դաշտավայրը չէ, իսկ «ռայոնները» բաժանվում են 3 մասի՝ մեծ, ավելի մեծ, ամենամեծ...

Մ. Մ.
Վանաձոր

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀՈԲԵԼՅԱՆ

Տիգրան Սարաֆյանի ազգային-մարզական գործունեության 50-ամյակը

Այսօր երեկոյան ամերիկյան Փասադենա քաղաքում մեծարանքի երեկո տեղի կունենա: Երեկոյի ժամանակ, որը կազմակերպել են Հայ մարմնամարզական միության շրջանային վարչությունը եւ վետերանների կազմակերպությունը, հանդիսավորապես կնշվի սփյուռքահայ հայտնի հասարակական-մարզական գործիչ Տիգրան Սարաֆյանի մարզական եւ հասարակական գործունեության 50-ամյակը:

Տիգրան Սարաֆյանն իր գործունեությունը պատանեկության շրջանից է սկսել: 1942-ից սկսած նա ակտիվորեն մասնակցել է Հալեպի ՀՄՄ մարզական եւ սկաուտական շարժմանը: Այնուհետեւ նա տեղափոխվել է Լիբանան՝ Տրիպոլի, որտեղ ՀՄՄ Փարամազ մասնաճյուղ է կազմակերպել: Հետագայում հաստատվելով Բեյրութում՝ Սարաֆյանը շարունակել է գործել որպես սկաուտական խմբապետ եւ նաեւ՝ որպես ՀՄՄ Փարամազ մասնաճյուղի պատասխանատու: Այս տեւեց մինչեւ ՀՄՄ տեղական վարչության անդամ դառնալը: 1961-62 թթ. Սարաֆյանն ընտրվեց ՀՄՄ ատենապետ: Այս շրջանում նա մեծապես նպաստեց, որպեսզի հայաստանյան ֆուտբոլային թիմերն այցելեն Լիբանան: Այսպիսով իսկական ոսկե կամուրջ հաստատվեց Երեւանի եւ Բեյրութի միջեւ: Սարաֆյանի ջանքերով առաջին անգամ ՀՄՄ ֆուտբոլային թիմը փոխադարձ այցելություններ կատարեց մայր հայրենիք, ինչպես նաեւ՝ Միջին Արեւելքի քաղաքներ:

Սարաֆյանը մեծ գործ կատարեց ՀՄՄ Բեյրութի տեղական վարչության ատենապետ եղած 20 տարիների ընթացքում: Նա աչքի է ընկել իր ազգային հասարակական բեղուն գործունեությամբ: Մեծ գործ է կատարել Լիբանանի շրջանի ՍԴՀ կուսակցությունում, որի մարզական-երիտասարդական շարժումն է ՀՄՄ-ը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ կուսակցության կենտրոնական վարչության կողմից Սարաֆյանը նշանակվեց արտակարգ մարմնի պատասխանատու: Այդ դժվարին օրերին համակարգիչ մարմինը մեծ պատասխանատվությամբ կարողացավ լավագույնս օգտակար լինել մեր գաղութին՝ առաջն առնելով շատ աղետալի դեպքերի:

Տիգրան Սարաֆյանն իր մարզական եւ հասարակական բեղուն եւ արդյունավետ գործունեության համար արժանացել է Լիբանանի եւ Հայաստանի պետական շրջանակների գնահատանքին՝ ստանալով համապատասխան պատվոգրեր եւ մեդալներ:

Ներկայումս Սարաֆյանը շարունակում է իր ակտիվ գործունեությունը: Նա ատենապետն է ՀՄՄ կենտրոնական վարչության, ինչպես նաեւ անդամ է այս տարվա օգոստոսի 28-ից սեպտեմբերի 5-ը Երեւանում անցկացվելիք Համահայկական առաջին խաղերի կազմակերպական կոմիտեի:

«Շախմատային Հայաստան» N 29

Լույս տեսավ «Շախմատային Հայաստան» հանդեսի հերթական՝ 29-րդ համարը: Այն բավականին հարուստ բովանդակություն ունի:

Այս համարում զետեղված է վաղը սկսվող աշխարհի լաստեգասյան առաջնության ամբողջական ցանցը:

«Շախմատային Հայաստանը» անդրադարձել է մեր երկու շախմատիստների՝ Կարեն Մովսիսյանի՝ Անդորրայում եւ Վիգեն Միրզոյանի՝ Լիոնցադում ունեցած ելույթներին:

Հանդեսը շարունակում է տպագրել Գարրի Կասպարովի 24 դասերը: Հերթական՝ 9-րդ դասից շախմատասերները կիմանան, թե ե՞րբ պետք է ընդունել զոհաբերությունը: Ինչպես հայտնի է, Կասպարովն այժմ Ինտերնետ համակարգչային ցանցի միջոցով մրցում է հանրաճանաչ աշխարհի դեմ: Հանդեսը համարից համար լուսաբանում է այս խաղի ընթացքը: Բերվում է պարտիան՝ Կասպարովի 18-րդ քայլից հետո, տրամագրով:

... 1999 թվականը Տիգրան Պետրոսյանի տարի է հայտարարվել: «Շախմատային Հայաստան» հանդեսը 1999-ի ընթացքում մեծ շախմատիստի ծննդյան 70-ամյակին անդրադարձել է իր բազմաբնույթ հրապարակումներով: Ավանդական դարձած «Այսպես էր խաղում Պետրոսյանը...» բաժնում բերված է Պորտիշ-Պետրոսյան պարտիայի վերջնամասը:

Կարծում ենք, շախմատասերներին շատ կհետաքրքրի նաեւ «Շախմատը նշանավոր մարդկանց կյանքում» խորագրի տակ տպագրված «Հենրիկ Մալյանը թագուհի է զոհաբերում» հրապարակումը: Նրանում մեր ճանաչված արվեստաբան եւ շախմատիստ Կարեն Քալանթարը պատմում է շատ տարիներ առաջ ականավոր ռեժիսորի հետ անցկացրած իր մրցախաղի մասին: Բերված են Մալյանի եւ Քալանթարի երկու պարտիաները, որոնք ավարտվել են զոհաբերությամբ:

Ինչպես միշտ, հանդեսի էջերում տեղ են գտել շախմատային կոմպոզիցիաներ, «Ե՞րբ, որտե՞ղ, ի՞նչ» բաժինները:

ՆԱՐԴԻ

Վերադարձան մրցանակներով

Ավարտվեց Նարդու («Բակգամոն») աշխարհի 24-րդ առաջնությունը, որն ավանդաբար անցկացվեց Սոնտե Կառլոյում:

Աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեց ավեդ Յորգեն Գրանդստեդը: Նա եզրափակիչ խաղում 23-10 հաշվով վստահ հաղթանակ տարավ Իսրայելի ներկայացուցիչ Կարմելիի նկատմամբ:

Առաջնությանը մասնակցում էին նաեւ Հայաստանի մի քանի նարդիստներ: Վերջին մի քանի տարիներին մեր հանրապետության ներկայացուցիչները հաջող են հանդես գալիս միջազգային ամենատարբեր մրցումներում: Այս առաջնությունից եւս մեր նարդիստները ծեռնունայն չվերադարձան: Առաջնության երկրորդ՝ «Ինտերմեդիաս» մրցաշարում երկրորդ տեղ գրավեց Կոլյա Սուտյանը: Նա կարող էր նաեւ առաջինը լինել, բայց եզրափակիչում 15-17 հաշվով զիջեց Իսրայելի ներկայացուցչին: Երրորդ՝ «Բեգիներ» խմբում եւս երկրորդ մրցանակակիր ունեցանք: Նմանօրինակ մրցումներում առաջին անգամ հանդես եկող Ծաղիկ Մանուկյանը հիանալի դրսեւորեց իրեն՝ դառնալով երկրորդ մրցանակակիր: Առաջնությանը նախորդող ներկայացուցչական մրցաշարում խոշոր հաջողության հասավ Հայաստանի գավաթակիր Ավետիս Ռոստոմյանը: Նա հաղթեց բոլոր մրցանակակիրներին, գրավեց առաջին տեղը եւ արժանացավ հատուկ մրցանակի:

Աշխարհի առաջնությունից հետո մեր մարզիկները մեկնեցին Կիպրոս, որտեղ մասնակցեցին միջազգային խոշոր մրցումներին: Հայաստանի ներկայացուցիչները այստեղ եւս հաջող հանդես եկան եւ արժանացան մրցանակի:

ՖՈՒՏԲՈԼ

Բրազիլացիների նոր հաղթանակը

Մեխիկայում ընթացող Կոնֆեդերացիաների գավաթի խաղարկության երկրորդ խմբում եւս անցկացվեցին երկրորդ տուրի խաղերը:

Գվադալահարայում առաջինը խաղադաշտ մտան Գերմանիայի եւ Նոր Զելանդիայի հավաքականները: Գերմանացիները, որոնք նախորդ խաղում խոշոր հաշվով պարտություն էին կրել բրազիլացիներից, այս անգամ արդարացրին իրենց: Եվրոպայի չեմպիոնները հաղթեցին 2-0 հաշվով: Գոլերը խփեցին Պրեցը (7-րդ րոպեին) եւ Մաթեուսը (33):

Ապա մրցեցին Բրազիլիայի եւ ԱՄՆ-ի հավաքականները: Թարմացված կազմով հանդես եկող աշխարհի քառակի չեմպիոնները շատ դժվարին հաղթանակ տարան՝ 1-0: Այս միակ գոլը 13-րդ րոպեին խփեց բրազիլացիների երիտասարդ հարձակվող Ռոնալդինյոն: Նշենք, որ ամերիկացիները չկարողացան իրացնել 11 մետրանոց տուգանային հարվածը:

Երկրորդ տուրից հետո միանձնյա առաջատարը Բրազիլիան է՝ 6 միավոր:

Հաջորդ տեղերում են Գերմանիայի, ԱՄՆ-ի (3-ական միավոր) եւ Նոր Զելանդիայի (0) հավաքականները:

Առաջին հանդիպումները

Հոկտեմբերի օրը կայացան եվրոպական երկրների Չեմպիոնների լիգայի որակավորման երկրորդ փուլի եւ Ինտերտոտոյի գավաթի խաղարկության չորրորդ շրջանի առաջին հանդիպումները: Ներկայացնում ենք այդ խաղերի արդյունքները.

Չեմպիոնների լիգա

«Դինամո» (Ուկրաինա)–«Ժալգիրիս» (Լիտվա)՝	2-0
«Դինամո» (Վրաստան)–«Զիմբրու» (Մոլդովա)՝	2-1
«Դնեպր» (Բելառուս)–ԱԻԿ (Շվեդիա)՝	0-1
ԲԿՄԼ (Ռուսաստան)–«Մյոլդե» (Նորվեգիա)՝	2-0
«Ռապիդ» (Ռումինիա)–«Սկոնտո» (Լատվիա)՝	3-3
«Հակա» (Ֆինլանդիա)–«Գլազգո Ռեյնջերս» (Շոտլանդիա)՝	1-4
«Ռապիդ» (Ավստրիա)–«Վալետտա» (Մալթա)՝	3-0
«Պարտիզան» (Հարավսլավիա)–«Ռիեկա» (Խորվաթիա)՝	3-1
«Անորտոսիս» (Կիպրոս)–«Սլովան» (Սլովակիա)՝	2-1
«Լիտեքս» (Բուլղարիա)–«Վիծեզ» (Լեհաստան)՝	4-1
«Սլոգա» (Մակեդոնիա)–«Բրոնդբյու» (Դանիա)՝	0-1
«Բեշիքթաշ» (Թուրքիա)–«Հապոյել» (Հ. Իսրայել)՝	1-1
«Վեստմինայատեր» (Իռլանդիա)–ՍՏԿ (Հունգարիա)՝	0-2
«Մարիբոր» (Սլովենիա)–«Գենկ» (Բելգիա)՝	5-1

Ինտերտոտոյի գավաթ

«Ռոստելմաշ» (Ռուսաստան)–«Յուվենտուս» (Իտալիա)՝	0-4
«Ռենն» (Ֆրանսիա)–«Աուստրիա» (Ավստրիա)՝	2-0
«Դույսբուրգ» (Գերմանիա)–«Մոնտելյե» (Ֆրանսիա)՝	1-1
«Վեսթ Հեմ» (Անգլիա)–«Հերենվեն» (Բելգիա)՝	1-0
«Տյաբզոնսպոր» (Թուրքիա)–«Համբուրգ» (Գերմանիա)՝	2-2
«Մեց» (Ֆրանսիա) –«Պոլոնիա» (Լեհաստան)՝	5-1

Ե՛վ Չեմպիոնների լիգայի, ե՛ւ Ինտերտոտոյի գավաթի խաղարկությունում այս փուլի պատասխան խաղերը կանցկացվեն օգոստոսի 4-ին:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Նիզակ 2. Դալաս 3. Դեղձանիկ 4. Հալվե 5. Երդիկ 7. Գավիթ 8. Լազեր 9. Սոնյա 10. Նավազ 15. Արաբ 16. Ավանդ 17. Ամեթ 18. Ամիակ 20. «Բուրան» 21. Ավլոս 24. Աղյուծագի 25. Հագիս 26. Ախմախ 28. Ինարի 29. Ադենի 30. «Ջեմմա» 31. Ածելի 32. Անաբա 33. Իվանե

Հորիզոնական

1. Նայադ 4. Հայնե 6. Արենա 7. Գազել 9. Սուդան 11. Անծավ 12. Կազուս 13. Եգնիկ 14. Ցամար 17. Արիկա 19. Աբխազ 22. Համասեղ 23. Ճիաուրելի 25. Հորդա 27. Քուռակ 28. Ինեսա 30. Ջամնա 32. Աբասի 34. Ծածան 35. Սումախ 36. Իսայի 37. Լազաբ 38. Անանի 39. Ադիջե



Ուղղահայաց

1. Իր տերությունը ներկայացնող եւ տերության ու նրա քաղաքացիների շահերը այլ պետության մեջ պաշտպանող պաշտոնյա 2. «Մարտին Իդեն» վեպի հերոսը: 3. Ոսնաստակ 4. Աղաշանքի, խնդրանքի 5. Ամերիկացի դրամատուրգ 6. Ռուս քիմիկոս, տարրերի պարբերական համակարգի հայտնագործողը 9. Արծակ կամ յափաշտ ոչ մեծ այլաբանական ստեղծագործություն 10. Արագիլների ընտանիքի ծանրամարմին թռչուն 12. Հնոց, վառարան 17. Իսպանական եւ միջազգային բանվորական շարժման կին գործիչ 18. Հայ գյուղացու աշխատանքային երգերից 19. Ավստրալիայի մայրաքաղաքը 21. Ռուսական հեղափոխական առաջին թերթը 25. Քաղաք Ռուսաստանի Կրասնոյարսկի երկրամասում 26. Սուսերի տեսակ 28. Ծաղկի խանութ Երեւանում 30. Մանր դրամական միավոր 32. «Ոսկե քաղաքը» հանրահայտ հեքիաթի գլխավոր հերոսը 33. Օրգանիզմում նյութափոխանակության խանգարումից առաջացած ախտաբանական յուրատեսակ օեակցիաներով (որ, դեմքին պղտկներ) արտահայտվող հիվանդություն 34. Ամիլուոխայ գրող, «Հայու բեկորներ» ժողովածուի հեղինակը 39. Երեւանյան էլեկտրոնային առագաստագործ 41. Ժամանակի միավոր

Հորիզոնական

7. Ֆրանսիացի գրող, գիտաֆանտաստիկ վեպի հիմնադիրներից (2 բառով): 8. Ֆրանսիացի բանաստեղծ (ազգությամբ լեհ): 9. Ջանազան բաներ մեջը լցնելու համար խեցե, աղակե աման: 11. Կնքելու, դրոշմելու համար նախատեսված օեշինե իր: 13. Հալվեի մեկ այլ անվանումը: 14. ԱՊՀ պետություն: 15. Մարդու եւ կենդանիների օրգան: 16. Ռուս բժիշկ, դեղանախս հիվանդությունն առաջինը նկարագրողը: 20. Պոլիգրաֆիայում անհրաժեշտ տղիչ սարք: 22. Լեռնագագաթ Ալպերում: 23. Ուրիշի գրածն ամբողջովին յուրացնող: 24. Սեւ փայտ ունեցող արեւադարձային ծառ: 27. Քաղաք Ավստրալիայում: 29. Ցիթեռնածաղկավորների ընտանիքի դեկորատիվ մեղրատու ծառ: 31. Հին եւ միջին դարերում ազգական կարեւոր նշանակություն ունեցող կիրճ Կովկասյան լեռնաշղթայում ... դուռ: 35. Ցվական: 36. Պետություն Եվրոպայում: 37. Թռչունների խումբ: 38. Հեղուկ լցնելու աման: 40. Շիների վազք: 42. Հին հունական դիցաբանական հերոս: 43. Քաղաք Բրազիլիայի հարավ-արեւելքում:

Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱՄՆ

Նախագահական երկու թեկնածուներ Սենատում պաշտպանում են Ադրբեջանին

Ամերիկյան Սենատում Ադրբեջանի կառավարությանն ամերիկյան օժանդակություն չտրամադրելու վերաբերյալ անցկացված քվեարկությունը բացահայտեց նախագահության թեկնածու մի քանի սենատորների իսկական դեմքը:

Հունիսի 30-ին սենատոր Սեմ Բրաունբեքը (հանրապետական՝ Կանզասից) փորձեց ստկումներ մտցնել արտասահմանյան օժանդակության նախագծի մեջ՝ դրան կցելով «Մեսֆսի ճանապարհի մարտավարական ակտը», որն ինքնաբերաբար չեղյալ էր համարելու Ադրբեջանին սահմանափակումներ նախատեսող 907 հոդվածը: Տարիներ շարունակ Քլինթոնի վարչակարգը, պետքարտուղար Մադլեն Օլբրայթի առաջնորդությամբ եւ նավթային ընկերությունների, Թուրքիայի եւ Ադրբեջանի վարձած իշխանավոր քարոզչական ֆիրմաների, ինչպես նաեւ կես տասնյակ հրեական կազմակերպությունների աջակցությամբ փորձում է վերացնել այդ հոդվածը: Քվեարկությունը լավ ապիր էր վերտուգելու ամերիկահայերի քաղաքական ուժը: Եթե ծախողենք, ազերիներն ավելի կարծր դիրքորոշում կընդունեն Ղարաբաղի հարցի նկատմամբ: Այս հանգամանքներում չափազանց կարեւոր է մեզ համար իմանալ, թե ով է մեզ հետ Սենատում: Քաղաքական ինքնասպանություն կլիներ պաշտպանել մի սենատորի, որը Հայաստանի եւ Ղարաբաղի դեմ է քվեարկում:

Ի հակադրություն Բրաունբեքի, սենատորներ Սպենսեր Աբրահամը (հանրապետական՝ Միշիգանից) եւ Միչ Մկոնելը (հանրապետական՝ Քենտուկիից) ներկայացրին մի ուղղում «Մեսֆսի ճանապարհին», որով պահպանեցին Ադրբեջանին սահմանափակումներ նախատեսող հոդվածը:

Մի քանի ժամվա քննարկումներից հետո 53 հոգի քվեարկեց հօգուտ մեզ, 45-ը՝ դեմ, իսկ 2-ը՝ ձեռնպահ: Սա մեծ հաղթանակ էր հայերի համար, քանի որ Սենատում մենք չունեինք այնքան պաշտպաններ, ինչքան Ներկայացուցիչների պալատում: Հայկական ազգային կոմիտեն եւ Հայկական համագումարը մեծ ջանքեր էին գործադրել՝ հակակշռելու Վաշինգտոնում մեր դեմ կուտակված ուժերին, եւ պետք է խոստովանել, որ նույնիսկ ամերիկյան քաղաքականության համար տվյալ քվեարկությունը սովորական չէր:

Հայերի նկատմամբ Քլինթոնի վարչակարգի բացահայտ հակակրանքի պայմաններում ակնկալվում էր, որ դեմոկրատ սենատորների մեծամասնությունը կպաշտպանի դեմոկրատական Սպիտակ տանը, իսկ հանրապետականների մեծամասնությունը կընդդիմանա դրան: Մինչդեռ, ճակատագրի հեգնանքով, դեմոկրատ սենատորների երեք չորրորդը քվեարկեց Սպիտակ տան դեմ, իսկ հանրապետականների երկու երրորդը՝ կողմ: Մեր դեմ քվեարկողների թվում էին սովորական կասկածյալները՝ Բրաունբեքը, Բիրդը, Քոչրանը, Հելմսը, Լոտը, Նիկելսը: Իսկ մեր կողմ քվեարկողների թվում՝ մեր մշտական բարեկամներ Աբրահամը, Բիդենը, Բոքսերը, Դուրբինը, Ֆեյնսթեյնը, Քենեդին, Կերրին, Լեւինը, Մկոնելը, Սոյնիհանը, Սարբանեսը, Շումերը, Տորիչելլին:

Կուզենայի ծեր ուշադրությունը հատկապես բեւեռել երեք սենատորների վրա, որոնք նախագահական թեկնածության կոմիտեներ են ստեղծել: Մեր դեմ էր քվեարկել սենատոր Ջոն Մկֆեյնը (հանրապետական՝ Արիզոնայից), որը երկրորդ կարգի (փոխնախագահ) հանրապետական թեկնածուներից գլխավորն է: Հուսով եմ, սրանից հետո ոչ մի հայ նրան ոչ մի քվե չի տա, կարեւոր է դեմ կանգնել նրան, որովհետեւ խոսակցություններ կան, որ նա պատրաստվում է հանդես գալ Ջորջ Բուշի հետ: Մեր դեմ քվեարկած երկրորդ սենատորը Ռոբերտ Սմիթն է Նյու Հեմփշիրից, որը վերջերս է հանրապետականից դարձել անկախ: Հայերը նրան էլ ոչ մի ձայն չտվեցք է տան, որ կուսակցության անունից էլ հանդես գա:

Երրորդը Օրին Հեթչն է (հանրապետական՝ Յուտայից): Նա 907 հոդվածը պահպանելուն կողմ էր քվեարկել եւ չնայած այնքան էլ մեծ հնարավորություններ չունի նախագահական ընտրարշավում, այնուամենայնիվ, մենք պարտավոր ենք շնորհակալ լինել եւ նեցուկ կանգնել նրան:

Այս առիթով նշենք նաեւ թեկնածուների շարքում այլ զարգացումների մասին:

Էլիզաբեթ Դոուլը հուլիսի 16-ին մի հայտարարություն հրատարակելով՝ վերահաստատել է իր կողմնորոշումը Հայկական ցեղասպանության, դեմոկրատական Հայաստանի եւ ինքնավար Ղարաբաղի նկատմամբ: Նա նույնպես վերահաստատել է իր դիրքորոշումը Ադրբեջանին ամերիկյան օժանդակություն չտրամադրելու վերաբերյալ: Վստահ եմ, որ հայկական համայնքն իր հնարավոր բոլոր միջոցներով թիկունք կկանգնի նրա թեկնածությանը՝ հաշվի առնելով նրա եւ ամուսնու՝ սենատոր Բոբ Դոուլի երկարամյա ծառայությունները մեզ հետաքրքրող հարցերի առնչությամբ:

Մյուս կողմից, դեմոկրատական կուսակցության կողմից առաջադրված նախագահական թեկնածու Բիլ Բրեդլին հուլիսի 22-ին Վաշինգտոնի մամուլի ազգային ակումբում ելույթ ունենալով ասել է. «Հայկական ցեղասպանությունը տեղի է ունեցել, բայց դեռ պետք է ճանաչվի թուրքական կառավարության կողմից: Ես կարծում եմ, որ այդ ճանաչումը շատ կարեւոր է, որովհետեւ անցյալը դիմագրավելով է հնարավոր կառուցել ավելի լավ ապագա»: Նման հայտարարությամբ նա հանդես էր եկել նաեւ ապրիլին: Մենք պետք է գնահատենք նրա սկզբունքայնությունը:

Վերջապես նշեմ, որ մի քանի հայերի նախաձեռնած ծաղկեպսակ-դրամահավաքն՝ ի նպաստ փոխնախագահ Ալ Գորի, չեղյալ էր հայտարարվել եւ ուրախ եմ դրա համար, որովհետեւ Գորը մերժում է ընդունել Հայկական ցեղասպանությունը: Նա հավանաբար պաշտպանում է Ադրբեջանին օժանդակություն ցուցաբերելու նախաձեռնությունը: Մենք չպետք է պաշտպանենք Գորի թեկնածությունը, մինչեւ նա ինքն առաջինն ընդունի եւ ճանաչի մեր ցեղասպանությունը:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆոռնիա կուրիեր»

AED

Academy for Educational Development

Կանանց հասարակական կազմակերպությունների համար տարածաշրջանային համագործակցության շրջանակներում նախատեսվում է կազմակերպել «Կանանց մասնակցությունը տնտեսական ոլորտում» ծրագիր:

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային հաղորդակցման շրջանակներում նպաստել Կովկասի կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցությանը: Ծրագրի իրականացման համար Կրթության զարգացման ակադեմիան (AED), որը գործում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ, պատրաստ է պայմանագիր կնքել Հայաստանում գործող այն կազմակերպության հետ, որն ունի կանանց զբաղվածության, եկամուտների, փոքր գործարարության զարգացման ոլորտում կնոջ մասնակցության, հասարակական կազմակերպությունների ֆինանսական կառավարման հիմնադրույթների դասավանդման փորձ:

Հայաստանում գործող կազմակերպությունը հրավիրվում է աշխատելու ամերիկյան փորձագետների համագործակցությամբ, որոնց հետ համատեղ պետք է մշակել, կազմակերպել եւ իրականացնել կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների եռօրյա աշխատանքային հանդիպում:

Աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Կազմակերպության ընտրությունը կկատարվի մրցութային կարգով:

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար AED-ի երեւանյան գրասենյակը բոլոր հետաքրքրված կազմակերպություններին հրավիրում է հանդիպման, որը տեղի կունենա օգոստոսի 3-ին, ժամը 15:00-ին, AED երեւանյան գրասենյակում:

Նյութերին նախօրոք ծանոթանալու համար խնդրվում է դիմել AED-ին **ոչ ուշ, քան 1999 թ. օգոստոսի 2-ը, ժամը 17:00-ն:**

Հեռախոսներ՝ 27-17-20, 27-70-08:
Հեռ/ֆաքս՝ AT&T 151 945:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENTEL

Արմենտելը հայտարարում է բենզինի եւ դիզելային վառելիքի գնման մրցույթ: Շահագրգռված կազմակերպությունները պետք է ներկայացնեն.

- պետական ռեգիստրի վկայականի պատճեն
- լիազորագիր
- կազմակերպության ֆինանսական իրավիճակի վերաբերյալ տեղեկանք առ 01.06.99 թ.
- Երեւանում եւ այլ քաղաքներում գտնվող լցակայանների քանակը, տեղակայումը, այն քաղաքները, որտեղ կարող է վառելանյութ առաքվել
- իրավաբանական հասցեն

Մրցույթի պայմաններն են՝

- ապահովել տրանսպորտային միջոցները կտրոններով շուրջօրյա լիցքավորելու հնարավորություն
- մատակարարել որակյալ վառելանյութ (համապատասխան սերտիֆիկատով)
- վճարումը փոխանցման կարգով 30 տոկոս կանխավճար տվյալ ամսվա առաջին տասնօրյակում
- երեք ամսվա համար գների անփոփոխելիություն:

Մրցույթին մասնակցել ցանկացողները պայմանների վերաբերյալ իրենց կարծիքը, գների մասին առաջարկությունները կնքված ծրարներով կարող են ներկայացնել հանձնաժողովին մինչեւ 10.08.99 թ. ժամը 12-ը, հետեւյալ հասցեով՝ Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 605 սենյակ, Արմենտելի գլխավոր տնօրենի ընդունարան, հեռ. 28-92-04, 28-10-52:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՋ ՀԱՍՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է

Սույն թվականի օգոստոսի 2-ին մասնակցելու Շիրակի մարզի Ախուրյան ավանի «Զրաշինարար» ՓԲԸ-ի, «Գյումրիի հյուրանոցային տնտեսություն» ՊՓԲԸ-ի եւ Արմավիրի մարզի Շահումյան գյուղի «Նժդեհ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի բաժանորդագրությունը:

Տեղեկություններ համար զանգահարել Երեւանում՝ 52-15-60, Գյումրիի մասնաճյուղում՝ 3-01-30, Վանաձորում՝ 4-04-86 հեռախոսահամարներով:

ՀՀ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Ջեք Լանգը եւ Հայոց ցեղասպանության ճանաչումը

«Մի շարք ոճիրներ անժամանցելի են: Ցեղասպանությունը դրանց թվին է պատկանում: Ճանաչել ցեղասպանության գոյությունը պարտադիր պայման է բոլորի համար, որովհետեւ նման մի ոճիրը ամբողջ մարդկությանն է վերաբերում: Ուրանալ դրա գոյությունը, նշանակում է վիրավորել վերապրողներին, նախատել զոհերի հիշատակը եւ նրանց երկրորդ անգամ սպանել»: Այսպիսի տողեր է գրել իր եզրակացության բաժնում նախկին նախարար, այժմ Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին հանձնախմբի նախագահ Ջեք Լանգը, որը «Լիբեր Ամիկորում Ջոն մոհամեդ Բեհաուի» վերնագրով հոլանդիայում հրատարակված գրքի իր ստորագրությունը կրող պրակի պատճենը վերջերս ուղարկել է «Յառաջ» օրաթերթի խմբագրությանը:

Տասը էջերի մեջ մշակույթի նախկին նախարարը խորը վերլուծականով անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը՝ հիշատակելով քաջատեղյակ աղբյուրներ: Ազգային ժողովի 1998 թ. մայիսի 29-ի որոշումը զանազան իմաստներ ուներ, գրել է նա: Նախ արդարության արարք էր հանդեպ Ֆրանսահայերի, նաեւ համակրանքի արտահայտություն՝ հանդեպ ամբողջ հայ ժողովրդի: Արդա՝ բարոյական պահանջի գոհացում: Ֆրանսիան պարտավոր էր վճռական դիրք գրավել, հայտարարելով, որ ճանաչում է 1915-ի Հայկական ցեղասպանությունը: Դրանով նա ցույց տվեց իր հավատարմությունը ընդհանրական արժեքներին, եզրակացրել է նա:

Հ. Ծ.

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՅԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (569393, 58135)), տեղեկագրով (1200 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Ազգ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1097 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 29.07.1999 Գինը՝ 100 դրամ

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

30 հուլիս

9.00 Հայլուր
9.20 Բարի լույս, Հայաստան
10.20 Հեռուստասերիալ «Մոխրոտը»
11.10 Հենց այնպես
11.25 Արտակարգ ալիք
11.35 Գ/Ֆ «Կրակ, ջուր եւ ոչնչնչ խողովակներ»
13.00 Հայլուր
13.15 Ծիծաղի տուն
17.00 Հայլուր
17.20 Մուլտծրագիր
18.00 Հեռուստասերիալ «Մոխրոտը»
19.00 Մայրամաղաք
19.30 Հեռուստասերիալ «Կրքեր»
20.00 Հայուհի
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.45 Դեմքեր
22.20 Գ/Ֆ «Գերեզման թիվ 38»
00.00 Հայլուր
00.20 Ռուբիկոն+
Արբանյակային հեռարձակմամբ
02.00 Հեռուստասերիալ «Իմ երկրորդ մայրը»
03.00 Բարի լույս, Հայաստան

Մշակույթ
19.00 Սուլտիպլիկացիոն ֆիլմ «Թոմը եւ Ջերին»
19.10 Աշխարհի հրաշալիքները. Սմազոն
19.25 «Երազը, Ֆրանսիան եւ բատոնը»
20.05 Հեռուստաֆուտբոլ
20.30 Լաբեր
21.05 Սերիալ «Սիգարանոց Ազերակնեը» (3-րդ մաս)
22.00 Սիրեցեք գմփմանս
22.10 «Ճանապարհ լուսո». կրթություն եւ գիտություն
22.40 Գեղարվեստական ֆիլմ «Անանուն սեր»
00.25 Լաբեր

9.00 Տոմար
11.00 Գ/Ֆ «Էլիզաբեթ Հեյլիի հաջողության գաղտնիքը» (5-րդ մաս)
ավարտին Նժար
19.00 Մուլտֆիլմ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Սամուլի խոսնակ
20.00 Չ. Չաքլինի վաղ ֆիլմերից. «Նրա սիրելի ժամանցը», «Անոթիանը»
20.30 Ասպարեզ
21.05 Երաժշտական վերհուշ
21.50 Գ/Ֆ «Էգս վենտուրա»
24.00 Անդորր
0.05 Ա. Էլբակյանի «Ուրբաթ գիշեր բոլորովին հուն չունեմ» հեղինակային ծրագիրը
(2.30 Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Հանուն սիրո»
11.30-15.45 Բիզնես TV
16.00 Նորություններ
16.15 Ֆիլմ-հեքիաթ. «Եթե ես սպիտակ ձորք արաք լինեի»
17.40 Մուլտսեանս
18.00 Սերիալ «Հանուն սիրո»
19.00 Նորություններ
19.15 Սերիալ «Կոմսուհի դե Մոնսորո»
20.15 Վավ. դետեկտիվ «Թակարդ հակահետախույզի համար»
20.45 «Երալաշ»
20.55 Հաշվների դաշտ
22.00 Ժամանակ
22.45 Նշանավոր խուզարկու Կոլոմբոն «Գեղեցկության զոհը» դետեկտիվում
00.10 «Սպիտակ բուրգ» ակումբ
00.50 Նորություններ
01.05 Գ/Ֆ «Պահակը» (դերերում Ք. Շին, Լ. Գոստեթ, ԱՄՆ, 1984)

8.00-10.45 Բարի լույս, Ռուսաստան
8.20 Բոլորի շուրթերին
8.45 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
9.15 Հազար եւ մեկ օր
10.15 Հերթապահ բաժանմունք
10.45 Արդանմներ՝ փոստով
11.10 Սերիալ «Միլենդի»
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.20 Լուրեր
12.35 Սերիալ երեխաների համար «Փոքրիկ բաժանարարիկը»
13.30 Իմ ընտանիքը
14.30 Խանութ բազմոցի վրա
15.30 Սերիալ «Անտոնելա»
16.20 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.15 Երաժշտություն, երաժշտություն...
17.25 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Աշտարակ
19.00 Հոմեոպաթիա եւ առողջություն
19.05 Գ/Ֆ «Դեմիդովները» (2-րդ սերիա)
20.25 Սերիալ «Այդ. պարոն վարչապետ»
21.45 «Անելաշ» եւ ընկ.
22.50 Երաժշտական բինգ - նոր սերունդ
00.30 Պոդիում դ'արս
01.05 Հերթապահ բաժանմունք
01.50 Վարդեն ռալլի-99
02.05 Ջեյսոն Դոնովանը «Վերջին փամփուշտը» ֆիլմում (Ավստրիա)